

485

Հ. Եսեփաթ.

Երկու եղբայր

1910.

Վաղարշապատ.

835.

5-64

8307
5-64
պր. Գ. Բաքաբե.

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Հ. ԷՇԵԼԲԱԽ.



230

Արսասպաժ «Արարատ» ամսագրից




Քարգմ. Ռուսերենից
ԵՐԵՄԻԱ ՎԱՐԴ. ՍՏԵՓԱՆԵԱՆ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1910

35290



Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (Հ. Էսելբախ)

Բ. քաղաքի բանւորական թաղի ամենամեծ դպրոցների մէկից ժամը երեքի աշակերտներին արդէն արձակել էին, որոնք ուրախ ու զուարթ աղաղակներով ցրուեցին փողոցի այս ու այն կողմը:

Այդ օրը նշանակուած էր մանկավարժական ժողով: Փոշու մէջ ծածկուած յարգալից տրագիկն, ուրիշ դպրոցական առարկաների հետ՝ դրուած էր ուսուցչանոցի պահարանի վրայ և իր բարձրութիւնից առանձին հպարտութեամբ նայում էր վեց երկար նստարանների վրայ նստոտաժ պ. վերատեսչին և ուսուցիչներին:

Քննելու էր առաջարկուած մի բաւական լուրջ հանգամանք: Սօթ և ութ տարեկան երկու հարազատ եղբայրներ, երկուսն էլ ստորին դասարանի աշակերտներից, իրանց վարք ու բարքով, նիստ ու կացով մեծ շփոթութիւն և յուզմունք էին ձգել ընկերների մէջ, դրա համար էլ անհրաժեշտ էր, և վերջապէս պէտք էր, վճռողական միջոցներ ձեռք առնուէին, թէ ինչպիսի յարաբերութիւն են ունենալու նրանց հետ:

Ամենից առաջ կարգացուեց նախկին ժողովի արձանագրութիւնը, որ և ստորագրեցին բոլորը: Ետոյ պ. վերատեսուչը հաղորդեց ուսուցիչներին շրջանային պ. տեսչի մի քանի նոր կարգադրութիւնները և խնդրեց իր կողմից, որչափ հնարաւոր է, դպրոցում հսկել կարգապահութեան վրայ. իսկ որպէս վերջարան յայտնեց արդէն նշանակուած ծննդեան արձակուրդի սկիզբը և վերջը: Ապա մի քանի անգամ ձեռներով տրագ. արագ կտրի բերելով գլխի մազերը, օրը կատարում էր չափազանց զրգուռած լինելիս:

— Ես այժմ վերագառնում եմ ներկայ խորհրդակցութեան գլխաւոր խնդրին, ասաց նա:

Հարցը պատում է երկու աշակերտների՝ Պետրոս և Յովսէփ Մերկերի շուրջը, Պ. Կենիգսդորֆի դասարանից... Արդեօք ձեզ հետ բերել էք աշակերտների վարք ու բարքի թերթը, Պ. Կենիգսդորֆ:

— Այո՛, պ. Վերապետուհի, ահա և...

— Ինչպէս այս վիպագրից երևում է, երկու եղբայրներն արդէն մօտ վեց շաբաթ կը լինի, դպրոց չեն յաճախում և թափառում են նրա չորս կողմը. և երբ ընկերներից մէկը կամ միւսը յայտնում է, թէ նրանց չարութիւնները, բացակայ դասերի թիւը արձանագրում են ցուցակի մէջ և թէ մինչև անգամ այսպիսի նկատողութիւնով «Ներողամտութեան արժանի չեն», նրանք ուշուշոց են տալիս և յարձակում են ընկերները վրայ: Ինձ նոյնպէս յայտնեցին, թէ նրանք պատառել են իրանց դասագրքերը... բացի դրանցից աւելի լուրջ դանդաղանք են հասել ինձ: Նրանցից մեծ եղբայրը, Բնչպէս է նրա անունը, պ. Կենիգոզօրֆ:

— Պետրոս Մերկ:

— Ինձ այնպէս է թւում, որ հէնց այդ մեծ եղբայրն է ամեն բանի բուն պատճառը, ես կարծում եմ, բոլորը նրա խելքի ծնունդն է: Իրանց հարազատ մօր ասելով ահա վեց շաբաթ կը լինի, որ գիշերներն էլ տուն չեն գալիս:

Ուսուցիչների մէջ արտայայտուեց խուլ արտունջ:

— Այդ արդէն անհանդուրժելի է, նկատեց Շուլցէն:

— Բոլորովին ուղիղ է, պարոններ. իսկ այդ ամենը, որոնց հետ անհնար է հաշտուել, քանզում, հիմնադատակ են անում դպրոցական կարգապահութիւնը: Ընկերներից մինը փորձել էք փոքրին բռնի դպրոց բերել. նոյն րոպէին մեծ—անամօթը իսկոյն կտորել է բռնողի գլուխը: Երկուսն էլ ծխում են. այդ դեռ ամենը չէ. երբ նրանք խանութների առաջներից անցնում են, շարուած նարնջներին, խնձորներին, կըր հացերին ձեռք են մեկնում և... և դողանում են: Մի խօսքով անում են այն ամենը, ինչ որ խելքներին փչում է: Իսկ թէ գիշերներն ո՛ւր են անցկացնում, Աստուած միայն գիտէ:

Մօտ օրերս գիշերապահը նրանց տեսել էր տան առաջի մայթի սանդուխի աստիճանների վրայ պառկած. այդ ժամանակ նրանք իրանց անունները կեղծում են ու ասում, թէ իրանք որը են. իսկ երբ գիշերապահը խղճալով նրան տանում է մօտակայ սրահնոց և հէնց նոր սկսում է գանգաճարել, որ դուռը բանան, տեսնում է, որ մօտը ոչ ոք չկայ:

— Իսկ այդ նման է որ և իցէ արկածի, վերաբերեց Պետերը:

— Յաւելով պիտի ասել, այո՛: Սկզբում այդ աշակերտների հայրը ուշացած ու բաց թողած դասերի համար նշանակուած տուգանքը վճարում էր, իսկ վերջերում միշտ էլ պահանջած ժամանակին բանտ էր նստում:

Նրա կինը յայտնել է, թէ իր ամուսինը հարբող, ծոյլ մարդ է. ամենեւին հոգ չի տանում ո՛չ իւր և ո՛չ էլ զաւակների համար և թէ վաղուց է, որ իրան նոյն խի տանից դուրս է արել: Գառարանը հարկաւ նրան ենթարկում էր պատասխանատուութեան, բայց նա էլ ասում էր, թէ երեխաները իմը չեն: «Ես շատ անգամ եմ ներկայացել պ. վերապետին այդ անկարգութիւնների պատճառով, որը ինձ միշտ էլ խորհուրդ էր տալիս ձեռք առնել ամենախիստ միջոցներ վերջ տալու այդ... այդ խայտառակութեանը»: Ոստիկանը երբեք անգամ երեխաներին բռնել և ոտի պամբ դպրոց էր բերել. իսկ այդ երեւոյթը ամեն անգամ պատճառ է դարձել մարդկանց ուշադրութիւնը գրաւելու և դպրոցի առաջ հաւաքուելու, իսկ մեզ ամենիս պարզ է, որ ժողովուրդը միշտ էլ ոստիկանի հակառակ կողմն է եղել:

— Ի հարկ է, այդ ամենիս էլ արդէն յայտնի է, բացականչեց Շուլցէն նայելով ժամացոյցին, որովհետեւ նա արուեստագիտական միութեան դպրոցում դեռ մի դաս էլ ունէր:

Վերջին անգամ Բնչպէս կարգն էր ոստիկանը երեխաներին մի լաւ ծեծել էր. ես էլ բոլոր դասարանի առաջ խիտ յանդիմանութիւն կարդացի նրանց, ցոյց տալով նրանց վերայ որպէս վատ վարքի տէր երեխաների. երեկայեցէք, նրանք էլ ուրախութեամբ ընկերների առաջ, հրապարակապէս խոստացան ուղղուել:

— Իսկ այս ամենի հետեանքը ի՞նչ պետք է լինի: Ի՞նչ էք կարծում: Դրանից յետոյ դասամիջոցին, ուղիղ ժամը տասին՝ նրանք թաք կացան և ի՞նչ, դարձեալ անյայտացան, մինչև հիմա էլ նրանց գտնել չաջողուեց ո՛չ ծառային և ո՛չ էլ ոստիկանին. թէ նրանք ո՛ւր են թափառում, այդ Աստուած գիտէ:

Այս գիշեր նրանք կը գիշերեն որևիցէ երկայն սայլի վրայ, վաղը դռնում, հէնց երէկ այն բուրբ-բորան եղանակին, Բնչպէս է պատահել, նրանք կրկին գիշերել են սայլի վրայ և կամ կամուրջի տակ. Բնչպէս ասում են, նրանց գտնել անհնարին է:

— Յամենայն դէպս այդ ամենը թոյլատուած սահմանից անցնում է, ասաց Ֆինկէլը, որը արձանագրում էր ժողովի արձանագրութիւնը, թանաքամանը կամացուի մի կողմ հեռացնելով:

Ամենավատը այն էր, որ միացած աշակերտներն էլ առանց խղճահարուելու գրգռւում են, շարունակեց պ. վերապետուհի:

— Երկու եղբայրներ դողանում են այն ամենը, ինչ որ ձեռներն է ընկնում. մի խօսքով բառի բուն նշանակութեամբ որևէ կաններ են: Միայն Արարչին է յայտնի, թէ ի՞նչ է լինելու դրանց

վերջը մինչև այսօր նրանց ձեռքից ոչ մի բան չէ պրծել:

Ահա այսպէս, պարոններ: Ձեզ յայտնի է, որ ես ծեծե երկրպագուներից չեմ. մինչև անգամ այդ մաքից շատ հեռու, բայց ներկայ պարագայում մարդասիրութեամբ ոչինչ չես կարող անել: Իմ կարծիքով այս գէպը ում յարմար կըլինէր մի լաւ ծեծել, իհարկէ այդ չի ուղղի երեխաներին, դրա հակառակ մնացած աշակերտները վրայ խիտ լաւ ապաւորութիւն կը թողնէ՝ կազդի:

— Բոլորովին արդարացի է. — Առանց դրան էլ այդ անպիտան երեխաները ուղղիչ տան թեկնածուներ են:

— չէնց այս րոպէին ինձ ներկայացաւ զպրոցի ծեր ծառան և յայտնեց, որ պատահմամբ իմացել է, թէ վերջին գիշերը որտեղ են գիշերել. նա իմ սենեակում սպասում է մեր հրամանին. պ. Վերբել, բարի եղէք կանչել ծառային այս անգ:

Վերատեսուչը իր զեկուցման ժամանակ մինչև անգամ բարկացաւ և ծառայի ներս մտնելուն սպասելով, ջղային ու դողդոջուն ձեռներով սեղանի վրայ կուտակուած ցուցակներն էր թերթում:

Վերջապէս ծառան ներս մտաւ: Դա մի առոյգ ու ժիր ճերուկ էր՝ բոլորովին սպիտակ բեխերով: Աչքերը տակը անհամար կնճիռներով: Եթէ նոյն իսկ հազած էլ չըլինէր իր ճերմակ, խնամքով լուացուած տարազը, դարձեալ հէնց առաջին անգամից պէտք էր ընդունել, որ նա ծառայած զինուորական էր եղել: Ներկայ րոպէին նա հպարտանում էր իր ապագայ յաղթութիւնը գոյաւելնելով:

— Պ. Բեխաէր, դուք ուրեմն կարծում էք, որ վաղը կարող էք Մերկերին բռնել:

— Անպայման, պ. վերատեսուչ:

— Եթէ այդպէս է, ես ձեզ խնդրում եմ, վաղը շուտով գնացէք նրանց գիշերած տեղը և այսպէս թէ այնպէս նրանց դպրոց բերէք և եթէ կարելի կըզգաք, կարող էք նոյն իսկ ոտականի օգնութեանը գիմել և կամ ձեռները կապել: Ճանապարհին իհարկէ ինքնագլուխ ոչ մի բան անելու չէք:

Ծառան ուրբելով սպիտակ բեխերը—ինչո՞ւ պիտի ձեռք տամ... բայց յետոյ... այդ անպիտան դարձելիներին մի լաւ աղցան պէտք է ընեն: Այդ խօսքերը այնպիսի գեղջուկ բարբառով առաց ու այնպիսի արտայայտութեամբ, որ կարծես թէ քերտի երեխաներից վրէժ էր հանելու իր անձնական վերաւորանքի համար:

Ուսուցիչ Կենիգսդորֆը տեղից վեր կենալով: — Մի խօսք, պ. Բեխաէր, դուք շփոթեցիք: Պ. Վերատեսուչը հրամայեց ճանա-

պարհին երեխաներին չծեծէք: Այդ ինձ թողէք. ես ինքն նրանց կը պատժեմ: Վերատեսուչը վիզը երկարացրած մեղմ, դարմացական ու փորձնական հայեացք ձգելով երեխաները ուսուցչի վրայ, նշան տուեց ծառային:

— Դուք կարող էք գնալ:

Ես իմ յոյսը ձեր վերայ եմ դրել:

— Կաշխատեմ Պ. Վերատեսուչ...

Նրա հեռանալուց յետոյ կարծես թէ ուսուցիչները մէջ կենդանութիւն երևաց:

Պարոններ, ես ձեզ դարձեալ մի րոպէ պիտի պահեմ. ես դեռ ամենը չեմ վերջացրել առաց Պ. Վերատեսուչը և նորից անուշադրութեամբ սկսեց սեղանի վրայի գրքերը թերթել:

Ընդունենք, որ առաւօտեան մեր շարերին բերին դպրոց, թէ և ես կասկածում եմ:

Մի րոպէ ենթադրենք, թէ բերին. այն ժամանակ ինչպէս ենք վարուելու նրանց հետ:

Եթէ հրամայէք ծառային, որ նա հասարակ կերպով ծեծէ և նոյն իսկ խիտ, այնուամենայնիւ գրանով դորձը չի վերջանայ: Ես կարծում եմ, մենք բոլորս հասարակելու ենք ուսուցչանոց և ամենին ներկայութեամբ ծառան մի լաւ ծեծի է ենթարկելու նցանց:

Մի փառանք աղցան է դարձնելու, հեղնում է Վերբելը:

Դուք իրաւացի էք Պ. Վերբել, ես նոյնպէս ձեր կարծիքին եմ, որ այդ տեսակ պատիժը բոլորովին նպատակայարմար չէ:

Ապա ի՞նչ անենք. ինչ էլ որ լինի պէտք է հաշուենք ծերուկ Բեխաէրի հետ. կասկած չկայ, որ մենք երեխաներին տանջելու մասին չենք մտածում, այլ թէ արժանի վարձատրութեան...

Եթէ այդպէս է, ես դարձեալ մի փորձ ևս կառաջարկեմ: Այն է, որչափ հնարաւոր է բացատրելով նրանց անկարգութիւնները վատ հեռանքը՝ յանդիմանել և այս ամենը արձանագրել ու գրում, որը վերջապէս նրանք մեր բոլորի ներկայութեամբ պիտի ստորագրեն և մանաւանդ պէտք է ուղղուելու հրապարակական փառաւոր խոստումը տան. . . չէնց այդ արձանագրութեան մէջ պէտք է դուրս բերել, որ եթէ նրանք շարունակեն այդպիսի թափառաշրջիկ կեանք, այն ժամանակ նրանց կըտրուի արձակման վկայագիր:

Յուսով եմ, որ դուք, պարոններ, դրա գէժ ոչինչ չունիք:

— Խօսք եմ խնդրում:

Բոլորի աչքերը սեռուեցին աշակերտները դատարարակէ:

վրայ, որը բարկութիւնից ջղային ձեւքերով շփում էր սեղանի կանաչ մահուդը:

— Դէ՛ շուտ արէ՛ք, վերջացնենք. շտապեցնում էին մի քանի ուսուցիչներ:

— Խնդրեմ, Պ. Կենիգսդորֆ:

Վերադառնալով սեղանից բազմաթիւ յետ-յետ քաշելով, երկարացրած ոտները իրար վերայ դնելով, դուրսը մի կողմ թեքած ընկաւ իր եղունգների զննութեան յետնից, իբր իսկական նշան, թէ աւելի է հետաքրքրուում եղած հարցերով:

— Մենք բոլորս Պ. Վերադառնալով հետ համաձայն ենք, ասաց Կենիգսդորֆը, որ հարցը շատ լուրջ է, իսկ ես լինելով նրանց դատարանական դատարարակը, ամեն տեսակ միջոց ձեռք կառնեմ. ապացոյց դրան, որ արդէն իսկ աշխատել եմ և որչափ հնարաւորութիւն եմ ունեցել, հաւաքել եմ նրանց մասին ամենաանհրաժեշտ տեղեկութիւնները: Գալով նրանց տարեքին՝ ինձ թոյլ եմ տալիս պնդելու, որ նրանք եօթ և ութ տարուց մի քիչ տուել են: Իսկ ինչ վերաբերում է նրանց անձնականին, իմ խորին համոզմունքն է, որ ընտելութիւնի ամեննին նրանք փչացած չեն. ներկայումս էլ նրանք այնքան վատ չեն, ինչպէս մեզ այդ երեւում է առաջին հայեացքից:

— Բաւական է, բաւական. ծիծաղեցին նրա ընկերները:

— Պարոններ, խնդրում եմ չընդհատէք: Շարունակեցէք Պ. Կենիգսդորֆ:

Անկասկած երեխաները թունաւորուած են օձերից, եթէ կարելի է այդպէս արտայայտել. ներկայումս նրանք թողնուած են առանց խնամքի, բազմի բերմունքին, վրաները ոչ մի հրկող չունին. իսկ այդ ամենը թողնում են շատ վատ և անախտի տպաւորութիւն: Նրանք համարելով իրանց պաշարուած գրութեան մէջ՝ դործում են իրանց վիճակին համապատասխան: Երբ առաջին անգամ, բռնի, ստիպմամբ նրանց դպրոցից ներս մտցրին, ես նրանց նկատողութիւն արի այդ տգեղ վարձուների համար, իսկ երկրորդ անգամ պատժեցի, որի համար այժմ ստատիկ ցաւում եմ:

Վերջին անգամ դպրոցի ծառան համարձակուել էր նրանց խիստ ծեծել ու այդպէս վերջնականապէս նրանց վախեցրել:

— Բայց, ամենատիւրերի Պ. Կենիգսդորֆ, մենք խօսք չենք կարող այդպիսի աշակերտներին վարձատրել թափառաշրջիկութեան համար, նկատեց Պ. Վերադառնալով որտեղ դառնութեամբ:

— Հասկանալի է, ո՛չ. սակայն պատժի արժանի են ո՛չ թէ երեխաները, այլ նրանց ծնողները, աւելի ուղիղն ասած՝ մայրը:

Եթէ հաւաքած տեղեկութիւններս ճիշտ են, այն ժամանակ անպայման դիտարկեմ մեղաւորը մայրն է:

— Մե՛ թէ

— Այո՛, ցաւելով պէտքէ շեշտել, որ մայրն է: Ես կարողացել եմ նրանց չարութեան արմատը բննել: Երեխաների այժմեան ծնողները, տասներկու տարի առաջ, որպէս մի զոյգ ամուսին՝ մանուկ են օրինական ամուսնութեան մէջ: Ամբողջ տասներկու տարուայ ընթացքում իրար հետ ապրել են հաշտ, սիրով և համաձայն: Միայն երկու ամիս է, որ յանկարծակի փոխուեցին. նրանք ունեցել են վեց զաւակ, որոնցից միայն երկուսն են կենդանի մնացել և ինչպէս երեւում է շատ էլ աղքատ են: Մարդը արհեստով ներկարար է. և երբ նա աշխատանք էր ունենում՝ առաւօտեան ժամը չորսին դործի էր գնում:

Վերջերումս նրանց մօտ գնում գալիս էր մի բեռնակիր, առաջին տեսակի սրիկաներից մէկը: Երեխաները իրանց յատուկ մանկական անմեղութեամբ բոլոր տեսածները պատմում են հօրը, թէպէտ և իրանց հասակին անհասկանալի բաների մասին, որոնք մարդուն այլևս ոչ մի կասկածանքի մէջ չէին թողնում, թէ կինը իրան խաբում է և անհաւատարիմ է և շատ հաւանական է, որ այդ ամենի համար մարդ և կին միշտ էլ ունեցել են ուղիղ և անախտ խօսակցութիւններ: Այդ երեւում է հէնց նրանից, որ երբ մի երեկոյ մարդը աշխատանքից տուն է վերադառնում, տեսնում է կինը տանը չէ. կինը տան կահ-կարասիքից շտաբը ծախել է ու տեղափոխուել բեռնակրի սենեակը, որը գտնուում էր ուրիշ բնակարանի վերնայարկում:

— Այո՛, այո՛. հիմա տեսէք, թէ ինչ են նշանակում քաղաքի բարքերը ու ծանր հաւաչեց Պ. Վերադառնալով:

— Եւ այն Մերկն էլ, որը համարում էր չրհարող, աշխատաւոր բանոր՝ այժմ դառել է հարեցող, իսկ երեխաները գիշերում են որտեղ կըպատահէ—բաց երկնքի տակ՝ քաղցած, ծաւաւ և արտառուելով քաւում են իրանց մօր իսկական մեղքերը: Ես կրկին կաշխատեմ հէնց այսօր տեսնուել երեխաների հօր հետ՝ խօսելու և մանրամասնօրէն տեղեկութիւններ հաւաքելու համար, այդ թշուառ ու անբաղկ ընտանիքի վերաբերմամբ:

— Ինձ թւում է, որ այդ պատմութիւնը չափազանց քաղցած է, ասաց Շուլցեն: Ամեն ասածի հաւատ ընծայել չի կարելի. անբարեխիղճ մարդիկ միշտ էլ ընդունակ են կեղծելու և շատ անգամ պոչաւոր ստեր են ստեղծում:

Զգուշացէք բարի Կենիգսդորֆ, չըլինի թէ ձեր դիւրահաւատութեան համար պատժուէք: «Ով կընկնի մուր, կըմրտտուի»:

— Բայց մենք խօսում ենք երախաների մասին ,
— Պէտք է ամեն բան թողնել ոստիկանութեան...
— Քանի որ ուշ չէ:

— Վերջապէս, իւրաքանչիւրն իր դիտյոթն պէս է դործում.
Իսկ ինչ վերաբերում է ինձ, ձեր խոնարհ ծառային, ես հա-
կատող պատմութիւն չեմ ունի անել:

— Պ. Կենիգզորֆ, յիշեցրեց Պ. Վերապետուհի, դուք ու-
զում էիք երեխաների մասին խօսել:

— Եթէ նայն իսկ հարկաւոր էլ լինէր բռնել երեխաներին
ու դպրոց բերել, ես կարծում եմ ներկայ պարագաներում ա-
նարդարացի կըլինէր նրանց պատժել. քանի որ դործի բոլոր
փաստացի կողմերը վերջնականապէս պարզուած չեն: Մարդ
ու կին փոխադարձաբար իրար վրայ դանդաղում են. երեւի
երկու կողմն էլ մեղաւոր են. իսկ գալով աղաներին՝ չպէտք է
թոյլ տալ, որ մինչև ոսկորները փանան. պէտք է բարոյ թեամբ
ազդել նրանց հոգիները վրայ. անարժան և անսպասելի ներս-
դամութիւնը աւելի լսօրը կազդէ, քան թէ ամենախիստ պա-
տիժը:

— Իսկ դուք ի՞նչ կարծիքի էք պարոններ, Պ. Կենիգզոր-
ֆի նոր առաջարկութեան վերաբերմամբ, հարցրեց Պ. Վերա-
պետուհի:

— Պ. Կենիգզորֆը բաւական անձանօթ է մեր քաղաքի
բարձրերի հետ, նկատեց պ. Շուլցէն: Մենք այդ դառնութեան
բաժակի համը վաղուց ենք առել. մենք չենք կարող իրերի վե-
րայ այդպէս թեթեւ աչքով նայել:

— Յամենայն դէպս կարելի է փորձել...

— Իսկ եթէ այդ է՞լ չաջողուի:

— Դեռ ապագայի համար մենք աւելի ուժեղ միջոցներ
ունենք Պ. Վերապետուհի. բայց ես հաւատում եմ, որ մեզ պի-
տի յաջողուի:

— Այնքան, այդ բանում դուք հաւատացած էք, պաշտօ-
նակից:

Առաջէք խնդրեմ, իսկ քանի տարի է, որ պաշտօն էք
վարում, հարցրեց Շուլցէն, փոքր ինչ ծաղրական ձևով:

— Դուք կարծում էք, որ փորձասութեան համար հինգ
տարին բաւական չէ, Պ. Շուլցէ. բայցի դրանից՝ մինչև իմ աշա-
տեղ դալը և պաշտօն ստանձնելը, ես մի ամբողջ տարի վա-
րում էի դաստիարակչի օգնականի պաշտօն ուղղիչ հիմնարկու-
թեան մէջ, ամեն անգամ և աւելի դժուար դէպքերում ես
միշտ էլ ունեցել եմ ցանկալի յաջողութիւն ներդրումսով
և մէկ թէ խոստրեամբ:

Սկսուեց ընդհանուր տաք լինճաբանութիւն: Վերջապէս պ.
վերապետուհի յայտնեց, թէ ինքը ընդունում է, որ պ. Կենի-
գզորֆը, ինչպէս երեխաների դաստիարակ, նրանց բնաւորու-
թիւնը աւելի լաւ է ուսումնասիրել, քան համար էլ ապագայի
միջոցները լիակատար համոզմամբ կը թողնէ նրա ազատ հա-
յեցողութեանը: Երկտասարդ ուսուցիչը շնորհակալութիւն յայտ-
նեց, իսկ ժողովը փակուեց:

Գպրոցից ամենից առաջ դուրս եկաւ Կենիգզորֆը: Նրա
դէմքը բոլորովին կարմրել էր, ինչպէս կարմիր տակ. և չնայելով
դրոյի սաստիկ սառնամանիքին, այնուամենայնիւ նա վերադ-
կուն կոճկելը մոռացաւ: Նրա պաշտօնակից ընկերները դեռ
ևս մի քանի րոպէ էլ սպասեցին դպրոցի դռան սուղւոր գլա-
նակները ծխելու համար:

— Իսկ այդ Կենիգզորֆ, ասաց Շուլցէն ուսերը շարժե-
լով... և նայելով հեռացող ընկերի յետևից... և շրթունքները
վերայ երևացին հազար ու մի ծամածռութեան կեղծ ժպիտներ:

Բոլոր ժամանակը լուռ ու մունջ Շուլցիը երեք լուցիկ
փչացնելով և հաղիւ վերջին լուցիկով գլանակը վառելով...

— Կենիգզորֆը մի պատուական երկտասարդ է, վերջա-
պէս վրաբերեց նա. հետն էլ անյաջող փորձեր անելով, որ
կարողանայ ուրեւ կարճ բէտերը, որոնք միշտ էլ բերանն էին
մտնում. իսկ դուք այդ մասին ի՞նչ կասէք Պետերս, դառնալով
իր կասկածոտ ընկերին:

Պետերսը շատ էլ շուտ ըմբռնողներէ չէր. մտաւանջու-
թեամբ քորելով ականջները տակը՝ ասաց. «Ես ի՞նչ կարող եմ
ասել: Դեռ երկու տարի չկայ, որ նա քաղաքումն է...» և
բարձրացնելով գլուխը սովորականի համեմատ օդը քթից այն-
պէս ներս քաշեց, կարծես թէ թունդ հարբուի ընկած լինէր:

— Իսկ մենք շատ տարիներ առաջ էինք էլ համարձակու-
մից պէտք գտել, ասաց Խինկելը սրբելով ականջները, «մշտական
վերապետչի օգնականի թեկնածուն», որին հանարով ընկերները
այդպէս էին անուանում. իսկապէս հէնց ինքն էլ ներկայաց-
նում էր բաւական ծիծաղելի մի տիպ:

— Երեսուն տարի առաջ ուսուցչական սեմինարիայում՝
մեզ որպէս հեղինակաւոր մարդկանց աւելի յարգանք էին ցոյց
տալիս: Ինչո՞ւ հեռուն գնանք. հէնց ինձ վերցրէք. ես արդէն
հինգ տարուայ ուսուցիչ էի, երբ մի անգամ գիւղից դուրս
գլորսնում էի, որտեղ և ծառայում էի. յանկարծ ինձ պատահեց

հէնց իմ նախկին տեսուչը: Ուսուցչական սեմինարիայում ծխելը խիստ արգելուած էր, իսկ ես երկար ծխափողը բերանիս ծխելով գնում էի. իմ մէջ այնպէս խոր արմատ էր ձգել յարգանքով վերաբերուել գէպի տեսուչը, որ ես տեսնելով, թէ նա մօտենում է՝ երկար ծխափողը ձգեցի հալի մէջ:

— Դուք այդ ժամանակ կարող էիք խուրձերի մէջ հրացան էլ դառարկել, եթէ հրացան ունենայիք, նկատեց Շուլցէն, որը ընկերներէց ջոկուում էր նրանով, որ ամեն միջին հասցէին ասում էր մի անախորժ սրախօսութիւն:

Այն ժամանակ ստանալով մօտաւորապէս իննհարիւր մարկ, ես չէի կարող հրացան ձեռք բերել, սկսեց հաւատացնել Խինկելը կարմրելով, և ամօթխածութեամբ ծիծաղեց:

— Քեզ համար հրացան ձեռք բեր. • երգելով պատասխանեց ծաղրածու Շտէրլիը, գրպանը դնելով ծխախոտի արծաթեայ կոլոր ամանը:

Ցտեսութիւն մինչև երեկոյ... Կէդելախաղում: Խինկէլ, նայել՝ որ ժամանակին պոկ դաս կնոջիցդ...

Բոլորը քչքչացին: Խինկէլը կամացուկ շուռ եկաւ: — Ցտեսութիւն, ասաց նա և շտապ շտապ՝ քայլերը մեծացնելով՝ փողոցից հեռացաւ ու թեթեւ կռնակով հանեց մի մեծ դանակ: Նա այնպէս ուղիղ էր գնում, ինչպէս փայտից շինած մարդ լինէր. իսկ ձեռները այնպէս էր շարժում, ասես երկու կողմից օգն էր թիավարում:

Մնացած ընկերները կրկին անգամ հաստատեցին, որ երեկոյան բոլորը կը հանդիպեն Կէդելախաղում ու ապա շուտով ցրուեցին:

Շուլցէն նայելով գրպանի հայելու մէջ աշխատում էր խնամքով կարգի բերել բեխերն ու մօրուքը և տեսնելով ելեքաբաժարչը վեր թռաւ, որ մի գուցէ արուեստագիտական դպրոցի դասից յետ մնայ:

II

Կենդիւնագործը վերադարձաւ իր փոքր, երկասարկական ամուրիի բնակարանը, որ բաղկացած էր երկու սենեակից: Ճաշակով տապալիած միտք, հետն էլ թունդ սուրճը նրան այնքան թարմացրին, որ նա զգալով իրան կազդուրուած, վերին աստիճանի գոհ, նստաւ դաշնամուրի առաջ և սկսեց նուագել «Մենդելսոնի» մարշը:

Դուռը ձեծեցին. բայց այնպէս թոյլ, որ նա սկզբում չը

հաւատաց իր ականջներին, կարծելով թէ սխալուում է և որպէս զի համոզուել մօտեցաւ դռանը:

Ներս մտաւ երեխան լացած աչքերով:

— Ինչի՞ համար ուշացար:

— Նո արդէն մի անգամ եկել եմ, պատասխանեց տղան, բայց տանիկինը տանը չէր և մարդ չը կար, որ սի որակները յանձնէի:

— Միայն նոր նկատեց Կենդիւնագործը տղայի լացած աչքերը:

— Մարտին, այդ ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ ես լաց եղել:

— Տեսրակները... տեսրակները, հեկեկալով պատասխանեց տղան. և դրեց սեղանի վերայ մեծ ծրարը:

— Առտում՝ իմ, վախեցածի պէս բացականչեց Կենդիւնագործը առնելով աշակերտական տետրակները, որոնցից մի քանիսը բոլորովին ցեխոտուած էին:

— Այո ի՞նչ ես արել:

— Մեղաւորը ես չեմ, շարունակեց լացը երեխան՝ աշխատելով ցեխոտած տետրակները կեղտը ձեռքով մաքրել:

— Թող, աւելի կը կեղտոտես. միթէ թղթով չէիր փաթաթել.

— Ի՞նչպէս չէ բայց Շ. փողոցի անկիւնում մեծ Մերկը յանկարծ իմ վերայ թռաւ և տետրակները ցեխը ընկան:

— Կընչանակէ մեղաւորը Մերկն է. ախրութեամբ բացականչեց Կենդիւնագործը ջոկելով տետրակներից մաքուրները ու մի կողմ դնելով. իսկ կեղտոտածները շարում էր սեղանի վերայ չորանալու:

— Այո՛, Մերկը:

— Բոլորը վաղելով ընկած էին նրա յետևից:

— Ո՞վքեր էին վազողները:

— Ուրիշ երեխաներ:

— Ինչո՞ւ համար:

— Ուզում էին նրան բռնել:

— Քանի՞ հոգի կը լինէին:

— Մօտաւորապէս քսան:

Ուսուցիչը սկսեց տետրակների մըջից հանել ցեխոտած ձծողականները:

— Քսան հոգի մէկի յետևից. լաւ բան է. բացականչեց մի քանի րոպէ անցնելուց յետոյ:

— Իսկ ո՞վքեր էին նրանք:

— Ֆօդեքը, Կատիֆմանը Կօնդրատին:

— Հա՛, ի հարկէ և նա... իսկ յետոյ ինչ եղաւ:

— Ինչպէս ասացի, նրանք բոլորը ընկած էին նրա քամա-

կից, և երբ անկիւնն ծռուեց, այն ժամանակ յարձակուեց ինձ վրայ և . . .

— Եւ տետրակները ցեխը ընկան .

— Այո՛, բայց ես չեմ մեղաւորը, նորից հեկեկաց Մարտինը:

— Ոչ որ չի ասում, թէ մեղաւորը դու ես. բայց զբանից ես խօսմ չեմ յարձակուել քո վրայ, որ լալիս ես. քեզ պէս մեծ տղային ամօթ չէ՞ լաց լինել: Մաքրիւր, մաքրիւր աչքերդ, ամօթ է:

Մարտինը գրպանից հանելով մեծ մաքուր թաշկինակը սրբեց երեսը. ապա ուժով քիթը վեր քաշեց ու յանկարծ նստեց, սկսեց լալ:

— Ահա՛, այդպէս. այժմս համարիւր թէ տետրակների կողքերի սպիտակ մօտեւները քանի՞ն են ցեխոտուել:

Մարտինը սիրտը հանգստացրած սկսեց եռանդով համարել. «տասն և ութը»:

— Երկու տետրակ բոլորովին փչացել է. ծծողականներից միայն մի քանիսը:

— Մարտին, Յօրբի գրավաճառանոցը գիտե՞ս:

— Գիտեմ:

— Ահաւասիկ քեզ փող, գնա՛, գնիր երկու վայելչագրութեան տետրակ № 2. Երկու դիւթին ծծողական և երկու դիւթին էլ մօտեւներ (եարլիկներ). միայն աշխատիր շուտ վերադառնալ տուն:

— Ինչպէս տեսնում ենք, այս երեկոն ուսուցչի համար տխուր չանցաւ, դրա մօտին մտածել էր աւագ Մերկը: Կենիդորժը, որչափ հնարաւոր էր, մտերում, չորացնում էր. ցեխոտած տետրակներից պոկում էր անմաքուր մօտեւները ու նրանց փոխարէն կըպնոտում էր նորերը:

Մօտաւորապէս ժամը եօթին սանդուխքի աստիճանների վրայ լսուեց ոտի ձայն:

Պա տանտիկնոջ որդին էր, որը երեւի դործ չունենալու պատճառով, սովորականից աւելի շուտ էր աղատուել: Կենիդորժը ձայն տալով նրան հարցրեց:

— Ֆերդինանդ, գիտե՞ս, որտեղ է ապրում Մերկը:

— Այո՛, պարոն ուսուցիչ:

— Խնդրում եմ, գնա՛ նրա մօտ և, եթէ տանը կը լինի, ասա՛, որ ես անպատճառ խնդրեցի, որ ինձ մօտ գայ:

Հէնց այդ րոպէին սանդուխի վրայ երեւեալ Ֆերդինանդի մայրը, այրի Կլին:

— Տեկին, դուք հակառակ ոչինչ չունի՞ք, եթէ ձեր որդին իսկոյն կատարէ իմ թեթեւ յանձնարարութիւնը, հարցրեց նրան ուսուցիչը:

— Ի հարկէ՛ ո՛չ. պ. Կենիդորժ, դուք այնքան դժբեր էք նուիրում նրան, որ նա ամենայն ուղարկութեամբ պէտքէ կատարէ մի այդպիսի չնչին յանձնարարութիւն:

— Վերջին նուիրած գիրքը ինձ շատ դուր եկաւ, ասաց Ֆերդինանդը և ուրախ ուրախ թռչկոտելով սանդուխի աստիճանների վերակից վայր իջաւ:

Քառորդ ժամ չանցած նա կոտորուած սրտով, ինչպէս վերաւորուած վերադարձաւ:

— Ֆերդինանդ, Մերկին տեսա՞ր:

— Ֆերդինանդը շփոթուած ժպտաց. այո՛, բայց նա տանը չէր:

— Ո՞րտեղ տեսար:

— Նա գինետուն էր գնում, երբ ես պատահեցի նրան և ձեր խօսքերը յայտնեցի:

— Իսկ նա ի՞նչ ասաց:

— Նա . . . նա ասաց . . .

— Ֆերդինանդը սկսեց հազալ—գլխարկի հետ խաղալով: Նա ասաց.

— Եթէ ես իրան պէտք եմ, թող ինքը գայ ինձ մօտ:

Տիրեց փոքր ինչ լռութիւն. ապա Կենիդորժը հարցրեց. չը լինի՞ թէ հարբած էր:

— Նա միշտ էլ բանթողից յետոյ հարբում է. երեւի դենետանը նրա երեսը ու ներկով մի լաւ օճեկ էին, իսկ բոլոր երեխաները ընկած էին նրա յետակից:

— Շնորհակալ եմ, Ֆերդինանդ, կարող էք գնալ:

Հագնելով վերարկուն ու գլխարկը ծածկելով Կենիդորժը գնաց քաղաք ընթերցու:

Յանկարծ նա կանգ առաւ. և ի՞նչ. փողոցի մեւս կողմում կանգնած էին երկու Մերկերը. եղբայրները հագած ունէին երկար վարտիք. գլխարկ ամեննին չունէին ծածկած. լսիտ դունաթափի դէմքերով, ցրտից բոլորովին կապտած:

Առաջին հայեացքից զրդուած Կենիդորժը կամեցաւ ձայն տալ նրանց, բայց յետոյ զղջաց. միայն կանգնած մտածում ու հետևում էր նրանց:

Երեխաները քամակները դէմ տուած պատին կտրճես մտադիր էլ չէին շարժուել, բայց մի քանի րոպէ անցնելուց յետոյ՝ նրանք փողոցի լայնութիւնը կտրելով դանդաղ քայլերով հասան հացթուխի խանութը:

Խանութի լուսամուտի վրայ դրած էր մի կտոր հաց, երեւի այդ վայր էր ձգել մի փոքր երեխայ, իսկ անցորդները վերցրել ու զրեւ էին լուսամուտի վրայ, որ անցորդների

ետերի տակ չը տրորուէր: Մեծ եղբայրը տեսածին պէս, ճիշտ վայրերն դադանն նման, ընկաւ այդ մի կտոր հացի վրայ, երկու կէս արաւ, մի բաժինը եղբօրը տուեց ու աչքերը դէս ու գէն ձգեց, թէ արդեօք իրանց ոչ ոք չի նայում և ճանաչելով իրանց ուսուցչին, թողին փախան:

— Պետրոս, Յովսէփ, բղաւում էր նրանց քամակից Կենդան-դօրֆը. բայց ի զո՛ւր: Երկու եղբայրները այնպէս անյայտացան, ինչպէս սատանաներ, մինչև անգամ յետ էլ չը նայեցին: Այդ վայրկեանին երկտասարդ ուսուցիչը գոռարանում էր որոշել, թէ նա արդեօք աւելի կարեկցութիւն, խղճահաւութիւն, թէ տհաճութիւն ու անբաւականութիւն է զգում . . . Վերապետու չը ճիշտ է նկատել. այդպէս երկար չի կարելի շա-րունակել:

Ճաշարանում՝ սպասածից աւելի երկար նստեց. և որպէս զի մի քիչ մառածութեանը կարողանայ իրանից հեռացնել՝ սկսեց պատկերադադր շաքաթաթերթերը թերթել: Ընթրիքը նրան դուր չեկաւ, խոյ երկու եղբայրները բնաւ գլխից դուրս չէին գալիս: Տուն վերադառնալիս բարձրացաւ ստատիկ ցուրտ ձիւնախառն քամի:

«Իէյնշտրատսում» նրան հանդիպեց կոպիտ դէմքով հարեւած մի մարդ. նա երգում էր մի շատ անվայել երգ, ու օրօրուելով այս ու այն կողմ, վերջապէս բռնեց իրան ուղեկցող կնոջ. այդ Մերկերի մայրն էր, նա ճանաչելով ուսուցչին, երեսը շուռ տուեց միւս կողմը:

— Երգի՛ր ինձ հետ. փնթփնթաց տղամարդը. քեզ ատում եմ երգի՛ր ինձ հետ: Բայց նա չէր երգում. ամօթից նրա դէմքը ռաստիկ կարմրած էր: Այդ գիշեր ուսուցչի աչքերին քուն չը մօտեցաւ. և բոլոր ժամանակ նա լսում էր կատաղի քամու սատականալը. նա չը դադարեց երկու եղբայրների վերայ մտածելուց, որոնք այսպիսի ցրտաշունչ եղանակին գիշերելու էին բաց երկնակամարի տակ: Մինչև անգամ նա անհանդատութիւնից գիշերը երեք անգամ անկողնիցը վեր կացաւ, բաց արեց լուսամուտը. փողոցի այս ու այն կողմը նայեց, բայց այնտեղ միայն գիշերային պահապանն էր խանդարում կէս գիշերուայ կատարեալ մեռելային լռութիւնը: Ուսուցիչը միայն լուսաբացին կարողացաւ քնել: Նրան երազում պատկերանում էին անհամար մանր հացի կտորներ, դրուած լուսամուտների վերայ. հաստ ցեխով ծածկուած տետրակներ. անվայել երգ երգող հարբածը, որը այնպէս կեղծ խալոտ ձայնով էր երգում, որ քնից նոյն րոպէին զարթնեց Կենդանդօրֆը, թէպէտ գեռ շատ վաղ էր վերկենալու. բայց նա խելոյն ան-

կողնից վեր կացաւ ու հագաւ շորերը: Իր խնդրանքը արկին Կլէյն աւելի շուտ սուրճ բերեց, այնպէս որ մինչև դպրոց դընալը նա կարողացաւ հետեւեալ նամակը գրել.

Յարգելի պ. Մերկ,

Դուք ինձ յատուկ պարտաւորեցրած կը լինիք, եթէ որ բաւականութիւն պատճառէք ինձ ձեր ներկայութեամբ: Հարցն այն է, որ պէտք է կարողանանք միջոցներ գտնել ձեզ տուգանքից ազատել ու ձեր սրբիւնների բաց թողած դասերի համար. անհրաժեշտ է, որ ձեզ հետ այդ մասին խօսեմ. խնդրում առանց քաշուելու շնորհ բերէք մօտս:

Ձեր բարեկամ ու սուցիչ Կենդանդօրֆ:

Ճանապարհին ինքն իր ձեռքով նամակը փոստարկղ ձգեց, որպէս զի ապահով լինի, թէ չի կորչել:

Հասկանալի է, որ երկու եղբայրները դպրոցում չէին լինելու. ինչպէս և դպրոցի ծառան: Երկար դատամիջոցին մի բան ուտելու համար ուսուցիչները հաւաքուեցին ուսուցչանոց: Խօսակցութեան առարկան Մերկերն էին. բայց դպրոցի ծառայի յանկարծ ներս մտնելովը ընդհատուեց:


— Դէ՛ շուտ ասա՛, ձեզ յաջողուեց աշակերտներին բռնել խմբովին հարցրին ուսուցիչները:

Բռնելը՝ ես բռնեցի նրանց. ասաց ծերը երեսի բրտիքը սրբելով, բայց ափսոս այդ աւաղակութիւնը արդէն ժառանգական է:

— Ո՞ւր են երեխաները.— հարցրեց Վիրբելը, որը չափազանց սիրում էր իրան ներկայացնել վերատեսչի օգնական:

— Ուր է՛ն. անամօթները փախան, կասկած չկայ, փախան: Ուսուցիչների բարձր ձայնով քչքչալը ծեր ծառային աւելի կատաղացրեց:

«Բայց ո՛չինչ. ինչ էլ որ լինի, ես այդ անպիտաններին կը բռնեմ. ճիշտ խօսք եմ ասում, կը բռնեմ: Ես արդէն հոտը առել էի, թէ նրանք որտեղ էին գիշերելու և ես ուղիղ իր ժամին այնտեղ էի. չէ՛ որ ձեզ լաւ յայանի է, թէ ես ո՛ր աստիճանի կարգապահ եմ . . . Բայց կարծես դիմամբը կահաւորուած ուղիղ իր ժամանակին գործից չէր վերադարձել. դրա համար էլ երեխաները հաւանօրէն մի ուրիշ տեղ պէտք է գիշերէին: Ուստի քայլերս ուղղեցի դէպի գետի ափին շինուած նոր շինութիւնը: Յտնկարծ կարծես գետնի տակից իմ առաջ բուռնում են երկու եղբայրները. ինձ տեսնելուն պէս, ինչպէս հրացանի դնդակներ, թռան անցան: Ես վազում եմ նրանց քամակից, կարծես մեղաւորների հոգիների ուրուական լինէին: Մեր



հանգէպ դայիս էր մի մտադործ. «բռնէք, բռնէք» կանչում եմ օգնութեան. մտադործը ինձ հասկացաւ. տարածեց երկար թեւերը ու կտրեց նրանց ճանապարհը. ուրեմն առաջից մտադործը իսկ յետեւեց ես և կարծես թէ արդէն նրանք որոգայթի մէջ էին ընկած. բայց աւա՛ղ. երբ մենք բաւականին իրար մօտեցանք, մեծը բռնեց փոքրի ձեռից ու սկսեց երկաթուղու գծերի վրայից քաշ տալ դէպի գետը: Եւ ի՛նչ էր կարծում մեծ եղբայրը մի ակնթարթում հառաւ գետի ափը և ուղիղ սառը գետի մէջ թռաւ ու լող տուեց դէպի միւս ափը:

«Իմ յետեւից, Յովսէփ, իմ յետեւից»... բղուում էր նա. և ինչպէս մի ձուկ մի բոպէնում լողաց գետի կէտը:

— Եւ նա իրան ջրէրը ձգեց:

— Մինչև անգամ առանց տատանուելու. բայց նա յոյս ունէր, թէ փոքր եղբայրն էլ իր յետեւից կը թռչէ. իսկ փոքրը ինչպէս երևաց, այնպէս ազատ լող տալ չը գիտէր. դրա համար էլ կանչեց:

«Պետրոս, Պետրոս». ինձ այնպէս էր թւում, որ սա էլ վերջի վերջոյ պիտի վճռէր եղբորը հետեւել. չնայելով որ մեծ եղբայրը լողալով միւս ափին բաւականին մօտեցել էր, սակայն լսելով եղբոր աղաղակը և տեսնելով, որ ես նրան արդէն բռնեմ եմ, նա...

— Ի՛նչ, վերադարձաւ, բացականչեց Կենիգադորֆը, որի դէմքը ուրախութիւնից ժպտում էր:

— Այո՛, վերադարձաւ: Այդ միջոցին մտադործի շունն էլ, որ սայլից կապած էր, փախչում էր. նա էլ շան յետեւից ընկաւ նրան բռնելու համար. իսկ ես մենակ փոքր եղբոր հետ սկսեցի տանջուել: Նա ընկաւ գետին վերայ ու սկսեց ոտններով ինձ քացի քացի տալ: Մեծը ազատ կերպով կարող էր փախչել ազատուել, իսկ նա ընդհակառակը թրջուած դուրս եկաւ գետի ափ, յարձակուեց իմ վերայ ու սկսեց իմ ձեռները կծոտել. այդ յաջող բոպէից օգտուեց փոքրը, ստի կանգնեց և Առտուած իմ, ինչպէս էր փախչում: Նոյն միջոցին արդէն մեր չորս կողմը հաւաքուել էին բանւոր մշակները և տեսնելով թրջուած երեխային ու լսելով նրա աղիողորմ աղաղակը, նրանք սկսեցին աղմուկ բարձրացնել, որ ես խեղճ աղային բաց թողնեմ: Մինչև անգամ նորանցից մէկը այնպէս ամուր հարուած հասցրեց կրծքին, որ ես հազիւ հաղ կարողացայ ոտի վրայ կանգնել մի ուրիշն էլ այդ բոպէին խեց երեսային ձեռքիցս և մինչ ես այդ յիմարին բացատրում էի, թէ բանը ինչու՞մն է, երկու եղբայրներն էլ մեր աչքերից արդէն հեռացել, անյայտացել էին: Այդ ամենից յետոյ զեւղացնենք էլ

Նաւակի մէջ տեղաւորուելով, նաւակը թիավարեցին դէպի միւս ափը:

Եւ ոչ ոք չէր հարցնում, թէ ովքեր են նրանք և կամ ի՛նչպէս են անուանում նրանց: Յայտնի բան է՝ նմանք իր նմանին է սիրում: Բայց թող մէկ էլ ընկենք իմ ձեռք, ես ցոյց կը տամ նոցա:

— Ասել է, Մերկերը դարձեա՛լ անյայտացան, հարցրեց վերատեսուչը, ներս մտնելով սենեակ:

— Ի հարկէ պ. վերատեսուչ. և ես ձեզ հաւատացնում եմ նորանցից մեծը իսկական...:

— Ճիշտ հերոս է. — բոլորովին լուրջ ընդհատեց նրան Կենիգադորֆը: Բայց ծիծաղը եղաւ նրան պատասխան:

— Ի հարկէ հերոս է. այդ երեսայի մէջ կայ աւաղակային խմբի խմբապետի անհասկանալի հակում՝ եթէ մենք նրան չպրտենք դէպի սխալ ճանապարհ, և կամ նշանաւոր լաւ մարդու յատկանիշ՝ եթէ կարողանանք նրան ուղղել և բարոյապէս դաստիարակել:

— Դուք... դուք անգրգուելի գաղափարական էք. Պ. Կենիգադորֆ, — ասաց վերատեսուչը. — Դէ՛հ, պարոններ, արդէն զանգակը խփեց... խօսակցութիւնը վերջացաւ: Դժւ, ծերուկ, սպասիր ու մանրամասնօրէն պատմիր ինձ, ինչպէս որ եղել է. ես կարծում եմ վերջի վերջոյ պէտքէ գիմել ստիկանութեան:

Ուսուցիչներից ամեն մինը գնաց իր դասարանի խաղերի հրապարակը—սրահը, իսկ ծերուկ ծառան սկսեց վերատեսչին ցոյց տալ փաթաթած ու կծոտած ձեռները:

III.

Ճաշից յետոյ դպրոցում կրկին առաջացաւ նոր և աւելի ուժեղ իրարանցում: Երկարահասակ, վտիտ ու անձուռն Կոնդրատին՝ վերատեսչի դասարանի աշակերտներից մինը, գեռ վաղուց Կենիգադորֆի չար աշակերտների հաշուում եղած, դանազան մանր մոնր լրատեսութիւնների համար ներկայացաւ նրան, ցոյց տուեց իր ուռած աչքը: Ճիշտ որ դուրս էր ընկել մի մեծ ընկոյզի չափ ուռոյցը, որը պատճառել էր ոչ այլ ոք եթէ ոչ «աւագ Մերկը» որպէս պատասխան իր և բոլորի փոխարէն:

— Ինչո՞վ նա քեզ խփեց:

— Փայտով. հիմնկուսնից այլև: Նա առանց ձեռնափայտի մասն չի գալիս, իսկ գրպանները միշտ էլ լիքն են քարերով:

— Այդ ո՞րտեղ պատահեց:

— Շտերնի գործարանի պատի տակ:

— Իսկ նա այնտեղ ինչ էր անում:

— Պատի մօտ տաքանում էր, որովհետև բոլորովին թրջուած էր:

— Նա ինչպէս կարող է տաքանալ ու շորեր չորացնել պատի մօտ կանգնելով:

— Որովհետև վառարանը շինուած է պատի քամակին և այնքան շատ են վառում, որ պատը դրսից միշտ էլ տաք է լինում:

— Ինչո՞ւ համար նա քեզ խօսեց:

Երկարահասակ, վտիտ ու անճոռնի Կոնդրատին լռեց. իսկ միւս աշակերտը նրա փոխարէն պատասխանեց, «որովհետև դա բոլոր ժամանակը Մերկին տաք պատից քաշքաշում էր և վերջն էլ շորը պատառեց»:

— Ինչո՞ւ համար էիւր դու քաշքշում Մերկին և ինչո՞ւ պատառեցիր նրա շորը:

— Ես ուզում էի բռնի, քաշելով դպրոց բերել:

— Ժամը քանիսը կը լինէր:

— Ժամը տասներկուսից մինչ քիչ անց էր:

— Բայց չէ՞ որ տասներկուսից յետոյ դպրոցում պարապմունք չկայ:

— Եւ քո ինչ բանն էր նրան քաշքաշելով դպրոց բերելը. չէ՞ որ դուրս համար դպրոցական ծառայ կայ:

— Եթէ Մերկը իրան պաշտպանել է և դու էլ նրա աղքատիկ շորը պատառել, նա քեզ հետ այդպէս վարուելու իրաւունք ունէր: Իսկ այսուհետև, ով նրան անհագիստ կանի և փողոցում նրա յետևից կընկնի, կամ կը քաշքաշէ նրան, ես այդպիսիների հետ այլ տեսակ կը խօսեմ:

— Հասկացա՞ր. այժմ կարող է՛ք հեռանալ:

Իրեկուայ փոստը Կենիգսգորֆին բերեց մի նամակ հետեւեալ բովանդակութեամբ:

Յարգելի ուսուցիչ:

«Այո՞ր առաւօտեան դուք իմ աղային հայհոյել ու խայտառակել էք միայն նրա համար, որ քաշքշելի Մերկը քիչ է մնացել սոդուս աչքը հանէ: Իմ որդին մինչև անգամ փողբիկ վառեկին էլ ձեռք չի տայ, իսկ Մերկերը ծնուած օրից եղել են աւաղակներ: «Ընծորը խնձորենուց հեռու չի ընկնում»։ Եթէ դուք միւս անգամ իմ աղային կը վիրաւորէք, ես նրան կը հանեմ և կըտամ ուրիշ բարձրագոյն դպրոց. ես թէև մի թշուառ այսի կին եմ, բայց առանց ձեզ էլ կարող եմ ապրել»:

Յարգանք Տիկին Գոցրադի

Վերաւորումս մայրական զղացմունքի այս հեղեղը Կենիգսգորֆին անորժակը չխանգարեց: Մերկերի հօրը սպասելու պատճառով այս երեկոյ տանը ընթրիք արւաւ:

Բայց նա իզուր էր սպասում, նրանց հայրը չեկաւ:

Երբ որ և իցէ մէկին անուանում են դադարարանի, այդ շատ հազուադիւս դէպքերում կը նշանակէ դովաւանք. իսկ շատ անգամ այդ արտայայտում է մեղադրանք անլրջութեան մէջ, միայն թէ աւելի փափուկ ձևով: Գոնէ այդ տեսակին էր պատկանում ընկերների վերաբերմունքը դէպի Կենիգսգորֆը: Ծանօթները նրան համարում էին լաւերից մէկը. բայց ոչ դորժնական մտածող, որի համար էլ կեանքի շատ դէպքերում պիտի խղճահարուէր:

Երկու անխնամ երեխաների ջերմ պաշտպանութիւնը թէև չը փոխեց հասարակութեան բարի կարծիքը նրա մասին բայց մի քանի ընկերների հետ լարուած յարաբերութեան պատճառ դարձաւ:

Հետեւեալ առաւօտ դպրոցում ոչ մի նորութիւն չկար, եթէ չը հաշուենք այն, որ ծերուկ Բեխտերը երկինք—դետինով էր երդուում, որ անպատճառ այդ սրիկաներին դպրոց կը բերի:

Կենիգսգորֆը իզուր տեղ էր սպասում ծեր Մերկին, այդ պատճառով էլ նա կրկին աւելի քաղաքավարի նամակ գրեց և ուղարկեց ապահովուած ձևով:

Գիշերը սաստիկ ձիւն էր եկել. և հետեւեալ առաւօտեան երեխաները ձնթօփ էին խաղում և ձնթօփը հենց բռերի մէջ հալւում էր. դուրսը խոնավ էր և պաղ ձիւնահոյտերը երբեմն երբեմն վայր էին թափւում, իսկ ջուրը ամենապինդ կօշիկից ծծւում էր, դրա համար էլ դպրոցը գրաւիչ և տաք էր թըւում:

Յանկարծ դռան դրսի դանդը զիւ հնչեց. դրա յետևից դռան մօտ լսուեց սարսափելի աղմուկ՝ աղաղակ. վերատեսչի շիկահեր աղախներ բանալով դուռը բարձր ճշաց:

— Այո ինչ է, միթէ կարելի է:

Կենիգսգորֆը իսկոյն դատարանից դուրս թռաւ, և մինչև անգամ մոռացաւ յետևից դուռը փակել: ձիւն որ . . . դռան մէջ կանգնած էր ծեր ծառան ու ամեն մի ձեռքով բռնած ունէր մի մի երեխայ, մինը աջ և միւսը ձախ, որոնք սառալիկ բըղաւում էին աշխատելով ձեռքից ազատուել, իսկ փողոցում դպրոցի առաջ արդէն հաւաքուել էին կաթ ծախողները, հաց մանածոյները, պառաւ կանայք ու բարձր—բարձր անիծում:

Ծեր ծառան միանգամից չէր կարող երկու աղայքն էլ ներս

բրթել, որոնք զանազան կողմեր էին քաշքշում, բայց տեսնելով
Կենսագործին, որ որպէս թէ իրան օգնութեան է հասնում, նա
փոքրին ուժով ներս բրթեց, ապա ձեռներով չղթայեց մեծին,
դէմ տալով դռան՝ նրան էլ նախագաւթ մտցնելու համար:

Փոքր եղբայրն ընկնելով նախագաւթի սալաշատակի վրայ
քերծուեց, արիւնը կամաց կամաց երեաց և չնայելով դրան
փորձում էր ուսուցչի մօտից կամացուկ փախչել, դուրս գալով
միւս հակառակ կողմից, որը դուրս էր գալիս բակը. սակայն
Կենսագործը բռնեց նրա օձիքից, թափ տուեց, ուշադրութիւն
չը դարձնելով նրա ուժեղ դիմադրութեանը և դասարան քա-
շեց, որտեղ աշակերտները վախից գունաթափուած սպասում
էին, թէ ի՞նչ կը լինի սրա վերջը:

Դրսում մի քանի փողոցային տղաներ ծիծաղելով շուայ-
նում էին մատները միջից: Ծները հաչում էին. պառաւ կա-
նայք հայհոյում, մի կողմից էլ ջրախառն ձիւնագնդերը նա-
խագաւթի ներսի պատերին դիպչելով կտոր-կտոր էին դառ-
նում. այդ դրութեան մէջ աղախներ խելացիութիւն արեց
ծածկեց դուռը և շղթան ձգեց. նա չը մոռացաւ բակի
դուռն էլ փակել, որովհետեւ աւագ եղբայրը թաւալում էր
յատակի վրայ և դեռ չէր կարելի հաւատալ, որ ձեր ծառային
կը յաջողուի նրան դասարան բերել, իսկ ընդդիմութիւնը ծե-
րուկի կատաղութիւնը շատացնում էր. նա երեսային վեր բարձ-
րացրեց և մի լաւ ձայնով ապտակ հասցրեց ու բոլոր ուժով
դասարան չալրտեց:

— Ահա, այդպէս, սրիկաներ, շներ, բղաւեց. նա և դրպա-
նից հանելով ամուր որորուած պարանի կտորը՝ ծայրը մի ձեռ-
քին կապեց ու բռնելով մեծի վզակից թաւ կանգնեց ա-
ռաջի նստարանի վրայ ու պատրաստուեց ծեծելու:

— Ես ձեզ ցոյց կաամ, թէ ի՞նչպէս պէտք է:

— Չը համարձակուես ծեծել, բարկացած ձայն տուեց երե-
տասարդ ուսուցիչը. բայց արդէն ուշ էր, նոյն բոպէին խփեց
առաջին դասի զանգակը:

— Ի՛նչտեղ, կրկնում եմ, չհամարձակուի՛ս ծեծել:

Սակայն ձերուկը այնպէս էր կատաղել, կարծես ոչինչ չէր
լսում:

Նորից թօկը պտտացրեց, իսկ երեսան գոռում, գոչում
էր՝ կարծես կտոր կտոր էին անում նրան:

ձարպիկ շարժումով Կենսագործը խեց ծերուկի ձեռքից
պարանը ու սաստիկ բարկութիւնից չպուտեց յատակի վրայ:

— Չհամարձակուի՛ս, այստեղ մեծը ես եմ. միայն ես ...
կո՛ւրծեր, հեռացի՛ր այստեղից:

Ու պարզելով ձեռքը, ցոյց տուեց դուռը: Բարկութիւնից
ամբողջ մարմնով գոգում էր:

— Պարո՛ն, ... պարոն Կենսագործ:

— Քեզ ասում եմ՝ դուրս կորիւ:

— Մի տկնթարթում ծերուկը փայտ դարձ. Դանդնեց իր
տեղը և ապա դուրս գնաց:

— Ա՛յ քեզ բան. գաւթումն ինքն իրան փնթ փնթում էր նա:

— Անիծած, գոռոզ ուսուցիչ:

Կենսագործը մի բոպէ ահանջ դրեց և լսելով այդ խօս-
քերը բարկութիւնից նախագաւթի դուռը վրայ խփեց ու այդ-
պէս աղատուեց ծառայից:

Հենց նոյն բղաւոզ երեխան, որը բոլոր ուժով բղաւում,
ձղողում էր, բոպէապէս ձայնը կտրեց. վախը սրտում՝ անհաւա-
տալի, ուռած աչքերով նայում էր ուսուցչի վրայ, որը դեռ
գնում գալիս էր դասարանական գրատախտակի և ուսուց-
չական պահարանի մօտ:

Փոքր Երեկը միանգամից անսպասելի կերպով թաւ դէպի
դուռը և ուղում էր փախչել, բայց ուսուցիչը իր ժամանակին
յաջողեցրեց բռնել նորա օձիքից և մի ձեռքով օղի մէջ բար-
ձրացրեց:

— Անհնաղանդ երեխայ. ասաց նա բարկութիւնից գողգո-
ղալով և սաստիկ գրգռուելուց ցնցեց երեսային բոլոր ուժով.
անպիտան երեխայ:

Յետոյ նա դրեց գէտնի վրայ և դուռը փակեց, բանալիքը
զրպան դրեց: Լուսամուտները բաւականին բարձր էին, այն-
պէս որ փախչելու ամեն տեսակ յարմարութիւն կորուած էր.
զրանում մեծ եղբայրը համադրած լինելով, բոլորովին կուշ
եկաւ, որը դեռ զոզոզողում էր այնուհետեւ աչքերը իր համար
բաւականին անյարմար, ծակ ու կոպիտ կոշիկներից չբարձրացը-
րեց, որոնց մէջ ձեռն ջուր էր լցուած: Նոյն բոպէին նրա դէմքը
կապտած ու թառամած էր: Քթից բերանը, բերանից մինչև
դուռն ձգւում էին տանջանքի խորը ահօններ: Փոքրիկ եղբոր
ստամոքսները ցրտի աղղղեցութիւնից չէին զաղարում կրճատուց
բայց և այնպէս նա դեռ ցաւում էր եղբոր վրայ: Կծկուած
իրանց տեղերում առանց արտասուելու, լուռ ու մունջ կանգ-
նած էին իտար մօտ, ինչպէս երկու դատապարտուածներ, որոնք
ոչ մի կողմից չեն սպասում ներողամտութեան: Լուսութեան մէջ
էր ամբողջ դասարանը. ոչ ոք տեղից չէր շարժում, կարծես
ամեն միւսը իր տեղում մեխուած լինէր:

Երեւ հենց հիմա մի բան կը կատարուէ... բայց իսկապէս
ի՞նչ. բոլորն էլ կարծես գծուարութեամբ էին շունչ քաշում:

Առստամուտի զրօն կողմից երևում էր մի փողոցային երեկայի գլուխ, որը կարողացել էր յաջողացնել բարձրանալ շրջանակի վրայ տեսնելու ու լսելու համար, թէ դատարանում ի՞նչ է կատարուում: Առուցիչը մտնեցաւ. փողոցային աղան իսկոյն վայր թռաւ վանդակապատից դեպի և փախաւ փողոցի անկիւնից. սակայն դեռ մի քանի բոպէ էլ լսում էր նրա ծամածռութիւնների շփոցը: Առուցիչը-դատարանի մէջ մանդաւը դեռ շարունակում էր:

Նա երեխաներին չէր նայում, չէր ցանկանում տեսնել նրանց: Պարանի կտորը դեռ յատակի վրայ էր. նա ոտով դեպաւ պարանին:

Իսկ եթէ նա պարանը վերցնէր կամ կամացուկ ձեռք տար... ոչ. ոչ. նա դեռ բաւական վրդովուած է. դեռ պէտք է հանգըտանայ... վերջապէս ամբիոնի վրայից վերցրեց գերբը ու շարունակեց Աւետարանի ընդհատուած բացատրական ընթերցանութիւնը:

«Յիսուսի մօտ բերին երեխաներին, որ նա օրհնէ նրանց, «ձեռք դնէ նրանց վրայ. իսկ աշակերտները սասառում էին նրանց, «որոնք բերում էին: Յիսուս տեսնելով այդ, բարկացած յանդիմանեց և ասաց. թոյլ տուէ՛ք մանուկներին, որ ինձ մօտ գան «և մի արգելէ՛ք, քանի որ այդպիսիների համար է արքայութիւնը»:

«Ճիշտն եմ ասում ձեզ, ով որ ինչպէս մանուկ արքայութիւնը չի ընդունի, նա արքայութիւն չի կարող մանել:»

«Եւ իւր գերին առնելով ձեռք դրեց նրանց վրայ և օրհնեց նրանց»: Նա կարգում էր խորոտ, կարծես ոչ իր իսկական ձայնով: Վերջացնելուց յետոյ կրկին գերբը դրեց ամբիոնի վրայ: Նա տեղից վեր չկացաւ, ինչպէս սովորաբար անում էր, այլ նստած մնաց իր տեղում և աչքերը Աւետարանից չէր հեռացնում:

Բոլոր աշակերտները լսեցին ու շաղկապեցին նայում էին երբեմն ուսուցչին, երբեմն երկու Մերկերին, որոնք դեռ ևս կանգնած դատարանում նայում էին յատակի վրայ վայր ընկած պարանին:

— Թո՛յլ տուէ՛ք մանուկներին, որ ինձ մօտ գան և մի՛ արգելէ՛ք նրանց. քանի որ այդպիսիների համար է Աստուծոյ արքայութիւնը. մի քիչ լռելուց յետոյ երկրորդ անգամ կրկնեց ուսուցիչը և հառաչելով սրտանց ախ քաշեց:

Իր տան հասարակ գրասենյակի մօտի պատից կախած էր

*) Մարկոս. Աւետ. Գլ Գ. Է. 15. 14. 15. 16.

Յիսուսի պատկերը, Որը օրհնում էր մանուկներին. մատերեց այդ պատկերը. շատ և շատ անգամ ինքը այդ պատկերի վրայ էր կենդրոնանում. մանաւանդ երբ դպրոցում այսպէս թէ այնպէս ճնշուած էր զգում իրան: Այո՛, յաճախ էր նայում. ամբիւնի մէջ կային ոտաբոբիկ, հիւանդ մանուկներ և Յիսուս նրանց էլ էր օրհնում: Մայրերը բերում էին նրանց իրանց Մեծ Բարեկամի մօտ թէ հառակաւորներին և թէ մանուկներին. մայրերը խոստովանում և հաւատում էին նրան:

Իսկ այժմոս երկտառադ ուսուցչի առաջ կանգնած էին երկու թունաւորուած օձեր. ընկերների կողմից հալածուած, դողդոջուն, քաղցած, մերկ երեխաներ, որոնք համարեա մայր չունեն. իսկ ապէս չունեն, դոնէ այնպիսին, որ կարողանար հասկանալ Փրկչի խօսքը և որը կարողանար հետեւել ցոյց տուած փրկութեան ճանապարհին:

«Թոյլ տուէ՛ք մանուկներին, որ գան ինձ մօտ և մի՛ արգելէ՛ք նրանց, քանի որ այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը», նորից բարձր տառապանութեամբ ու ջերմ զգացմունքով շեշտեց ուսուցիչը այդ սուրբ խօսքերը, այնպէս որ երեխաները առանց բացառութեան երկու եղբայրների, զարմացած բարձրացրին իրանց գլուխները ու հարցական ձևով նայում էին ուսուցչին:

Կենդանի օրօրք վեր կացաւ տեղից, նա հիմա իրան տիրում էր:

— Պետո՛ւս, ասաց նա. վերցրո՛ւ պարանը:

— Երեխան կռանալով վերցրեց ցեխոտ պարանի կտորը:

Ա՛յ, ա՛յ, հիմա էլ սա կոկիս. երեխայի մարմնով բոպէս-բար անցաւ պող սարսուռ և նա աչքերը ուսուցչի վրայից չէր հեռացնում յուսահատութեան և երկիւղի մէջ ընկած:

— Զգի՛ր պարանը վառարանի մէջ:

— Երեխան իր կանգած տեղում պաղած ու աչքերը ուսուցչի վրայ չռած, չէր ուղղում հասկանալ, թէ նա ի՞նչ է ասում:

— Ես քեզ հրամայում եմ՝ պարանը վառարանի մէջ ձգիր:

— Այո՛... Թո՛կը, պարանը:

— Այո՛, բաց վառարանի դռնակը կրակխառնելով, եթէ ոչ չափազանց տաք է:

Վառարանը գտնուում էր դատարանի հակառակ կողմը, դրա համար աշակերտները գլուխները այն կողմը չուռ տուին, վառարանի դռուը բաց էր... բոցերը երևում էին: Մեծ եղբայրը դեռ անորոշութեան մէջ էր, կրկին անգամ տարակուսութեամբ նայեց ուսուցչին: Զգի՛ր պարանը: Փոքրիկ, դունաստ տղայի նեղիկ կրծքից դուրս թռաւ խոր հաւաչանք:

Բոցերը պարանք լափեցին, որ տաքութիւնից կծկուէց ինչ-պէս ոձ:

Պետրոսը վերադարձաւ և առաջուայ պէս կանգնեց իր նշ-բօր մօտ աշակերտներին առաջ. նա ոչինչ չասաց: Բայց նրա աչքերից արցունքները առատ առատ հոսում էին, խոշոր, ան-ընդհատ ու լուռ . . . նա մինչև անգամ արտասուք չէր սրբում: Ամբողջ դատարանը դեռ ևս գտնւում էր նոյն քարայրած վիճա-կի մէջ և չէր լուում ոչ մի ծպտուն:

Հիմա-հիմա, երևի, կորոշուի երկու մեղապարանքի դա-տավրճիւր:

Ճնճողիկները, որոնց համար ուսուցիչը ձմեռ ժամանակ փչրում էր լուսամուտի առաջ հացի փշրանքներ, այժմ էլ ընաղդ-մամբ թռչկոտում էին սովորած տեղը և ինչ որ կարծես ճըթճը-թում էին վատ ժամանակների մասին, որ այսօր իրանց վրայ ոչ որ ուշք չը դարձրէց:

Մինչև անգամ նուագածուն, որն անսպասելի կերպով փողոցում նուագեց բսլրին յայտնի երգի դարձեալ չկարողա-ցաւ խանգարիլ դատարանական մեռելային լուութեան ներդաշ-նակութիւնը:

— Իսկ հիմա ասացէք, թէ ինչո՞ւ համար դուք միշտ դըպ-րոցից փախչում էք, Յովսէ՛փ, պատասխանիր:

Այդ հարցին փոքրիկ Մերկը չը կարողացաւ պատասխանել. սկզբում մեծն էլ չը պատասխանեց:

— Մերթ փողոցում դպրոցից աւելի՞ տաք է:

Պետրոսը սաստիկ դողաց, իսկ յետոյ խորին համոզմամբ պատասխանեց. «Ի հարկէ դպրոցում աւելի տաք է, բայց մենք վախենում ենք»:

— Իսկ տուն ինչի՞ համար չէք դնում:

— Մենք վախենում էինք:

— Պետրոս, երբ դու միշտ ողորմութիւն էիր խնդրում և երբ անցուդարձ անողները քեզ հարցնում էին. «Ո՞ր ես, դու միշտ պատասխանում էիր, թէ ծնող չունիս»:

— Այո՛: Իմ մայրը . . . իմ մայրը . . .

— Յետո՞յ:

— Իմ մայրը . . . նա լցուեց. չը կարողացաւ վերջացնել. միայն հանգարտ արտասուեց:

Կենիդսօրօրֆը այլևս այդ հանգամանքի վերաբերմամբ հարց չառաջրկեց. նա դպաց, որ առանց այն էլ շատ հեռուն գնաց:

Այո, իսկապէս այդ երեխաները ծնողներ չունէին. ո՛չ հայր և ո՛չ մայր:

Մայրը նրանց մէջ տեսնում էր իր մասնիչներին, հակա-

ռակորդներին և դրա համար էլ նրանց հալածում էր, իսկ հայ-րը երեկոները միշտ էլ հարբելով՝ կնոջ կակճից նրանցից էր վրէժ առնում: Նա ծեծում էր անբաղդներին, մինչև որ նրանցից արեւն կը հոսէր, դրացիներին ասելով:

— Դու պատի տակ ի՞նչ էիր անում, երբ Կօնդրատի աչ-քի տակին կապոյտ նշան թողիր:

— Ես ուղում էի չորանալ, իսկ նա ինձ քաշչում էր.

— Մերթ թըջում՞ էիր:

— Այո, ես . . .

Նա շփոթուեց, բայց յետոյ ճարպիկութեամբ ստեց . . . ես . . . ես . . . ջուրը ընկայ:

— Ի՞նչքա՞ր ընկար, թէ քեզ ձգեցին:

Մերկը երկիւղից աչքը ձգեց դատարանի վրայ ու դը-լուխը կախ արեց. նա հասկացաւ, որ ուսուցիչը ամեն բան լաւ է իմանում:

— Ցատիկեցի, ասաց նա.

— Ինչո՞ւ էիր դողանում, նարինջներ և պղտիկ սպիտակ կոլոր հացեր, և վերջապէս կարմիր ու խոշոր խնձորներ . . .

— Յովսէփը քաղցածութիւնից լալիս էր:

— Դու ինքդ է՞լ քաղցած էիր:

— Այո՛, ես ևս:

— Այդ ամենը այնպիսի տոնով էր հնչում, որ այլևս ամե-նափոքր կասկած անգամ չը մնաց այդ խօսքերի ճշմարտու-թիւնը ստուգելու համար.

— Այժմ է՞լ քաղցած ես:

Երեխան փոխանակ հարցին պատասխանելու գլխով արաւ ու նրա դեղնած, գունաթափ դէմքի վրայից կրկին արտասուե-քի կաթիլներ գլորուեցին:

— Դու վերջին անգամ ե՞րբ ես ճաշել:

— Այն օրը, երբ մայրս . . .

— Եւ նա նորից լցուեց:

— Իսկ մինչև այսօր չե՞ս ճաշել:

— Ո՛չ, երկու անգամ ճաշել եմ քեռուս մօտ. նա մեկ կա-մեցաւ տուն տանել դրանից յետոյ՝ մենք այլևս նրա մօտ չէինք գնում:

Երեխաները նախադատում էին քաղցած մնալ, միայն թէ ծնողները մօտ չը վերադառնան:

— Յովսէփ, դու է՞լ քաղցած ես, հարցրեց Կենիդսօրօրֆը փոքրիկ Մերկին:

Սա նոյնպէս շտապով գլխով արեց և պատրաստ էր

ձեռքը ընկածը կուլ տալ: Կենդանիները իր նախաճաշիկը բաժանեց երկուսի վրայ:

Մի րոպեում կերան վերջացրին:

— Դուք հիմա էլ քաղցած էք, չը կշտայա՞ք:

— Փոխանակ պատառխանի նրանց աչքերը փայլեցին:

— Վիճեգառուկ, եկ այստեղ, դարձաւ ուսուցիչը հարուստ մտավճառի տղային, վաղը հորդ մօտ և ասա՛ նրան, որ այստեղ կան երկու քաղցած ու աղքատ երեխաներ, որոնք արդէն մի քանի շաբաթ է, որ չեն ճաշել:

Իսկ քո հայրը, Վեւրին, չէ՞ որ հացթուլ է: Դու էլ տուն գնա՛ և նոյնը ասա՛: Նա կարելի է, ձեր հայրերը մի բան կը տան ձեզ ձեր ընտանիքի համար:

Երկու ընկերներն էլ ուրախութեան ժպիտներով գէպի դասարանի դուռը վաղեցին, բայց փակ գտան:

— Ի հարկ է նրանք դասարանից դուրս գնալ չէին կարող:

— Մերկ, ա՛ռ բանալիքը և բաց դուռը, ու տալով բանալին Մերկին ինքը գնաց գէպի վառարանը և ոկոսեց կրակը խառնել, կարծես թէ իրան երեք չի հետաքրքրում այն, թէ ի՞նչ է կատարում դռան մօտ:

Բայց երեսան ամենափոքր փորձ անգամ չարեց փակելու: Նա թողեց ընկերին ապա բարեղիծութեամբ նորից փակեց դուռը և բանալին յանձնեց ուսուցչին:

— Բաց դուռը և թող բանալիքը մնայ փականքի մէջ:

Պետրոսն այդ էլ ճշտութեամբ կատարեց և ուրախ ուրախ նայում էր ուսուցչին:

— Այդպէս. այժմ ասացէք ինձ, ի՞նչ փառքի էք արժանացել ձեր թափառաշրջիկութեան համար: Փոքրիկ Մերկը լուռ էր, մեծն էլ դուրսը կախ արաւ:

— Դէ՛, Պետրոս, ինձ նայիր. Յովսէփ, դու էլ ուղիղ աչքերիս նայիր:

Եթէ դուք ինձ բոլոր սրտով հաստատ և գիտակցաբար կը խոստանաք, որ այլևս ոչ ոք չէք, ես ձեզ կը ներեմ այն պատիժը, որին դուք արժանի էիք:

— Կամենում էք:

Երեխաները թափում էին աղի արցունքներ:

— Այդպէս՝ եթէ համաձայն էք, տուէք ինձ ձեր ձեռքը աղ-նութեամբ ու գիտակցութեամբ:

— Ես խոստանում եմ:

— Ես նոյնպէս:

— Ձեռք ձեռքի տուած՝ դէմառ դէմ կանգնած էին երեխաները և ուսուցչին:

— Ես ձեզ հաւատում եմ, որ դուք ինձ չէք խաբում:

— Երբեք էլ խաբելու չենք:

— Այդ պատասխանի մէջ այնքան վստահութիւն, հաստատ համոզմունք ու բերկրութիւն կար և նրա մէջ հնչում էր այնպիսի թեթեւութիւն, որ մինչև անգամ մնացած աշակերտներն էլ այնպէս ակն քաշեցին, կարծես, թէ բոլորն էլ սի ծանր բեռից ազատուցին:

— Իսկ դուք, աշակերտներ, վկայ եղէ՛ք. որ ես Մերկերին ներեցի. նրանք եթէ կամենան կը լինին կարգին, բարի տղաներ ինչպէս դուք էք: Դուք էլ սրանից յետոյ պէտք է նրանց քա՛նակից ընկնէք, հալածէք և կամ ծաղրէք նրանց:

— Ո՛չ, թնդաց ամբողջ դասարանը ինչպէս մի ձայն:

— Ում տանը կը գտնուի աւելորդ շուրեր, խնդրեցէք ձեր ծնողներէ, թող ձեզ հետ ճաշից յետոյ ուղարկեն դասարան, երկու Մերկերի համար:

Դուրսը ձիւն է գալիս, իսկ ընկերներդ մըսում են. ցուրտ է այնպէս չէ՛:

— Այո՛, շատ ցուրտ է:

— Իսկ դուք մօտեցէ՛ք վառարանին ու տաքացէ՛ք. ես միւս աշակերտներին էլ կը պատուիրեմ, որ նրանք էլ ձեզ հանգիստ թողնեն:

Երկու ներուածները կանգնած էին տաք վառարանի մօտ: Այդ ժամանակ դուռը ճռռալով բացուեց և ուրախ ժպիտները երեսներին վերադարձած աշակերտները կանգնեցին ուսուցչի առաջ. երկուսն էլ այնքան հաց, կալքաս-երջիկ էին բերել հետները կարծես մի վաշտ զօրք էին կերակրելու:

Աշակերտներին տուած էր գրաւոր վարժութիւն, իսկ մեր քաղցած երեխաները, որոնց համար ոպասում էր շատ առատ և ճոխ նախաճաշիկ, սկսեցին կամաց կամաց վերջացնել եղած պաշարը այն էլ այնպիսի ակորժակով, որ նայողը կը դարմանար նրանց ագահութեան վրայ:

Դասերը վերջանալուց յետոյ Կենդանիները Մերկերին առաջադեց ընտրութիւն անել 11-ից մինչև երկուսը տանը լինել կամ տաք ուսումնարանում նստարանների վրայ ազատ քնել: Եղբայրները կասկած չկայ «տուն գնալ» չէին ցանկայ, դրա համար էլ մնացին դասարանում:

Կենդանիները փակեց դասարանը նրանց վրայ ու բանալիքը իր հետ վերցրեց, «որպէս զի նոցա քունը չը խանգարեն» ինչպէս ինքն էր բացատրում նրանց: Խանգարել երեխաների քունը հնարաւորութիւն չկար. երկրորդ դասից յետոյ էլ նոքա գեւ. չէին արթնացել, չորրորդ դասն էլ անցաւ, բայց նոքա

դեռ քննում էին և հաղիւ հաղ կարողացան դարձնել: Բայ երկնահամարի տակ, սայլերի վերայ, չաւարտած շինութիւններն մէջ դիշերողներն համար տաք վառարանի մօտ, առանց անկողիններն բոլորովին չոր նստարաններն վերայ քնելը թւում էր, թէ ննջում են աղուամազ, փափուկ վերմակներն տակ:

Գպրոցական բաղանիսը, վաննան նրանց համար պատրաստ էր. հին շորերը, որ բերել էին ընկերները, նոյնպէս նոցա լաւ եկաւ, աւելին չէր էլ կարելի սպասել, իսկ ծառայի խոյտառակութիւնը . . . այս ամենից յետոյ նոքա իրենց զգում էին ինչպէս իսկական իշխանազներ:

Մինչդեռ Կենիգսդորֆը քամում էր վաննայի վերջին ջուրը և քանի որ երկու եղբայրները հազնում էին ուրիշ իրանց համար նոր շորերը, մնացած աշակերտները մի քանի ընդէ ևս հետաքրքրութիւնից դպրոցի շուրջը անցկացնելով՝ վերջապէս ցիր ու ցան եղան. այդ ժամանակ երկու եղբայրները կրկին դատարան եկան ուսուցչի մօտ. արդէն օրը սկսում էր մթնել:

— Պետրոս, դու քո խոստումը չե՞ս մոռանայ: Դուք վաղը իր ժամանակին դպրոց կը գամք:

— Այո՛:

— Եւ դուք մի՛ լինել . . .

Այդ հարցի վերայ Կենիգսդորֆը կանգ առաւ:

— Հիմա դուք ո՞ւր էք գնալու. հարցրեց նա մի քիչ լռելուց յետոյ:

— Ես եղբորս հետ կը գնամ, պատասխանեց փոքրը:

— Իսկ դու ո՞ւր ես գնալու, Պետրոս:

Սա շփոթուած նայեց ուսուցչի վերայ. յանկարծ բարկացաւ և յուսահատ պատասխանեց. — Չգիտեմ:

Միթէ դու չե՞ս կամենում տուն գնալ:

Ոչ, պատասխանեց Պետրոսը և համարեա ուսուցչի վերայ ձգեց թշնամական հայեացք, որ իրան այդպէս հարցեր էր տալիս: Նեղելի դռնաւոր երեսի վերայ նուրբ դժադրութիւնով դէմքը արտայայտեց վճռական հայեացքի կախարհութիւն. միայն թէ այդ ֆօնը մի վայրկյան տևեց. միւս կողմից երեսան կծկւում էր սպասելով ուղիղ հարուածի ու նորա տանջուած դէմքը միանգամից պտտեցրացրեց ծերի և հոգսերով ծանրաբեռնուածի տեսք:

— Դու տուն չե՞ս երթայ:

— Ո՛չ, պարոն ուսուցիչ:

— Պատճառն ի՞նչ է, տխուր կսկիծով հարցրեց Կենիգսդորֆը և նայեց նրա վրայ ըստն անբաւականութեամբ:

Մինչ այդ՝ նա շտապ պատահեց եղբոր բաժնինակը, քանդեց նրա շապիկի կոճակները ու դէն շարտեց: Տղայի թիակներն մէջ երևեցաւ մի մեծ արեւնալի վէրք:

— Ատումա՛ իմ, երկեղից բացականչեց Կենիգսդորֆ, այդ ո՞վ է արել:

— Նա, պատասխանեց եղբայրներից մեծը. դուրս հետ էլ տտամները սկսեցին զընդգնդալ, կարծես տենդի մէջ լինէր. և նա դողդողում էր զլիսից մինչև ոտները:

— Ո՞վ. հարցրեց ուսուցիչը, կարծես թէ հարցը չմըռնեց:

— Նա . . .

— Հայրդ . . .

— Այո՛, նա:

Խուլ՝ ինչպէս դատարկութեամբ, դուրս թռաւ մանկական անմեղ շրթունքներից. — Նա . . .

— Ուսուցիչը մի ընդէ լուռ կանգնած էր. նրա շունչը կտրւում էր. նրան այնպէս էր թւում, որ սենեակի օդը իր համար քիչ է. հիմա ի՞նչ ասեմ, ի՞նչ անեմ. անցնում էր նրա մտքից:

Քանի որ Պետրոսը օգնում էր եղբորը հագնելու, ուսուցիչը մի քանի անգամ յետ ու առաջ անելուց յետոյ, վերջապէս կանգնեց երեսանների առաջ:

— Գնանք միասին ինձ մօտ, առ ժամանակ ապրէք իմ սենեակի կտրի տակ:

Կամենում էր: Այնտեղ ինչ որ էլ լինի, վառարան կայ, տաք կը լինի. ուղիւմ էք իմ մօտ գալ:

— Այո՛, ուրախութիւնից իսկոյն բացականչեցին երեսանները:

Կրկին անգամ երիտառարդ ուսուցիչը խոր ախ քաշեց, իսկ յետոյ ուղեկցեց երկու անգաշտպան երեսաններին դէպի իր տունը:

IV

Կենիգսդորֆի տղի տանտիկինը կտրի տակի սենեակը մի լաւ տաքացրեց, երեսանների համար խոտից երկու հատ խոտկուռ շինեց, փալտները յարմարոցներով անկողիններ պատրաստեց. իսկ այդ ամենը վերջացնելուց յետոյ ուսուցչի յանձնարարութեամբ կուշտ կերակրեց:

Կենիգսդորֆը իր ձեռքով խոհանոցի լամպը պատի վերայ, որչափ հնարաւոր էր, բարձր ամրացրեց, երեսաններին էլ պատուիրեց, որ չլինի թէ ձեռք տան. ապա բերեց նրանց համար

մի քանի հատ պատկերազարդ գրքեր ու ասաց — Ես կրկին կը գամ ձեզ տեսութեան ու հեռանալով յեանկի ծածկեց զուռը:

Այդ ամենի դէմ երեխաները ոչինչ չունէին — Երանց այլանդակ դէմքերը չափազանց ժպտում ու փայլում էին բաւականութիւնից. Երանք իրանց զգում էին, ինչպէս թռչուններ տաք բներն մէջ:

Կենդանութիւնը իր սենեակում մի քանի բոպէ ատտանուելուց յետոյ վերջապէս վճռական կերպով հաղաւ վերահիւսն և արագ-արագ քայլերով դնաց երեխաների հօր բնակարանը: Նա Երան տանը չգտաւ: Իր այցեատմը ներս ձգեց դռան ճեղքից և յաղթանգամ կնոջն էլ յանձնարարեց, որը ապրում էր հէնց այդ բնակարանի նախագաւթում, որ ասէ Մերկին թէ իր մօտ էր եկել ուսուցիչը մի կարեւոր գործի մասին իրեն հետ խօսելու և թէ խնդրում է, հէնց այս երեկոյ անպատճառ գայ իր մօտ այդ անյետաձգելի գործի համար:

— Նա այսօր կրկին դատարան գնալու հրաւէր է ստացել, աւելացրեց կնիք ցոյց տալով դեղին թուղթը: Ձը լինի՞ թէ դուք այդ հրաւէրի համար էք ուղղում նրա հետ տեսնուելի:

— Պ. Մերկը ինձ մօտ հրաւիրուելու պատճառը գիտէ, որի համար ես ցանկանում եմ նրա հետ խօսել՝ պատասխանեց Կենդանութիւնը, որով չուզեց ուղեւորդ բամբասանքի նիւթ մատակարարած լինել այդ խանութ սանամօրը:

Դեռ կէս ժամ չէր անցել, երբ նա վերադարձել էր տուն, որ դուռը ծեծեցին:

— Խնդրեմ՝ մօտէք:

Դռան շէմքի վերայ երեւաց մի մարդ, որի արտաքինը ամենեւին վստահութիւն չէր զարթեցնում: Անհանգիստ անկայուն հայեացքը, շնչառական շնչառութիւնը և բոլոր շարժ-ժանրները ցոյց էին տալիս, որ նա գտնուում է վերին աստիճանի յուզուած վիճակի մէջ: Դուռը նա իր յեանկի բաց էր թողել:

— Բարեւ ձեզ. դուք ի՞նչ էք ուղղում ինձանից:

— Նո ցանկանում եմ, Մերկ, ձեզ հետ զրոյց անել... այդ խօսքերից յետոյ Կենդանութիւնը դէմքի վերայ երեւաց անհանգստութեան նշան:

— Ե՛յ: Ահա և ես: Ի՞նչ էք ուղղում ինձանից:

Մերկի ամեն մի խօսքը, ամեն շարժումը՝ ապացուցանում էին, թէ ինքը Կենդանութիւնը համարում է իր անձնական թշնամին:

— Հարցերը կանգնած չեն վճռում. այն էլ մի քանի խօսքերով և Կենդանութիւնը փակեց դուռը: Խնդրեմ նստեցէք:

— Ինչո՞ւ համար:

Առանց այն էլ քեզ համար բաւական նստեցի:

— Ինձ համար նստաք:

— Այո՛, ձեզ համար:

— Միթէ դուք կարծում էք, որ ինձ բաւականութիւն է պատճառում այն, որ դուք բանտարկուել էք:

Հասկացէք, որ ես ծառայող եմ և աստիճանաւոր. երդուել եմ և պարտական եմ կատարել իմ պարտքը: Եթէ քո որդիները զլանում են դպրոց յաճախել, ես պարտական եմ այդ արձանագրել գրքում: Եթէ վերստուգութեան ժամանակ իմ գրքերը կարգին չգտնեն, միթէ դուք էք պատասխանատու իմ փոխարէն: Դուք ի՞նչպէս էք այդպիսի բան մտածում:

— Այո... բայց...

— Մերկ, երբ առաջին անգամ վճռեցին ձեզ բանտ նստեցնել, ես ձեզ ոչ մի անգամ իմ կեանքում չէի տեսել և չէի էլ ճանաչում: Միթէ ես կարող էի ձեր դէմ անձնական որակիցէ մի բան ունենալ...

— Ո՛չ... բայց...

Մերկը գլխարկը աւելի աչքերը քաշեց, որը ամենեւին գրել-խից հանած էլ չէր:

— Դուք, երևի, մտածում էք, որ ես ձեզ թշնամի եմ...

Բայց ընդհանրապէս: Ինձ ձեզ համար մի քանի անգամ դատարան են հրաւիրել: Հրաւիրել են ինչպէս վկայ և ոչ թէ մեղադրող. մեղադրողը եղել է տիրող օրէնքը:

Ես ձեզ համար կորցրել եմ իմ ազատ ժամերը վաղելով դատարան, չէ՞ որ ես դու համար ոչինչ չեմ ստացել և ոչ մի անձնական օգուտ էլ չեմ ունեցել: Ես ձեզ ոչ բարեկամ և ոչ էլ թշնամի եմ. այլ վերաբերում եմ գէպի ձեզ առանց խրտուրթեան:

— Ուրեմն այդպէս.

— Ի հարկէ: Միթէ ես պարտական եմ ձեր որդիներին համար աղատ միջոցիս, այն էլ պարապմունքներից յետոյ, դատարաններում քաշ գալ:

— Ինձ բանա նստեցնելու, կատաղեց Մերկը:

Ինձ անպատուում են, իսկ ես պէտք է լռեմ և էլի դուրս է գալիս, որ ես եմ անամօթը՝ անպիտանը, իսկ զգուշի կինս — լիբբը...

— Հէնց այդ մասին էլ ես ձեզ հետ ցանկանում եմ խօսել. հիմա դուք նստեցէք. չէ՞ որ կանգնած չի կարելի այդպիսի կարեւոր խնդիրների մասին դատել:

Մերկը նորից չնստեց. այլ այս անգամ միայն գլխարկը վերցրեց, որը ձեռքում բռնած արտում էր:

— Ես ձեր օրգիններին ձեռքից առաջ սկսեցի ճանաչել. նրանք բարի ու լավ երեխաներ են:

— Այ թէ ինչ:

Բացահայտելով թեան մէջ արտայատուում էր խորը անվստահութիւն:

— Կրկնում եմ՝ խելօք ու բարի սղաններ են: Ձնայելով այն բոլոր կատարած յիմարութիւններին, դեռ ես նրանց մէջ այնքան լաւ յատկութիւններ կան, որ ես չէի կարող ինձ հաւատացնել, որ մէկը և կամ միւսը ծնողներից վատ լինէին:

— Պ. ուսուցիչ...:

— Այդ իմ համոզմունքն է: Ես թէ ձեր և թէ կնոջ մասին արդէն հաւաքած ոչեմ բաւական, գուցէ և ճիշտ, տեղեկութիւններ:

— Ամեն բանի մէջ մեղաւորը կինն է, բարկացած ըզուեց Մերկը: Նս է մեղաւորը. քանի որ ես նրա համար շատ ատրիներ աշխատել եմ. երկար տարիներ ես եղել եմ նրա համար օրինաւոր, կարգին մարդ. մի կաթիլ օղի բերանս չէի առնում. իսկ հիմա... հիմա... ոչինչ, ես այդ ամենի համար կը վարձատրեմ թէ կնոջն և թէ այն օրիկայ շանը:

Եւ նա ձեռքի հարուածով այնպէս պինդ խփեց դաշնամուրին, որ նրա վերայ դրուած «Բեթհովենի» կիտարձանը վայր ընկաւ ու կտոր կտոր եղաւ:

Բանւորը շփոթուած կտորները վերցնելով իրար վրայ էր դնում:

«Այո... Այո...» փրնթփրնթաց նա. «կինն է... կինն...»

— Մերկ, թողէ՛ր կտորները, տանտիկինը յետոյ կը մարդէ: Գուք տեսնում էք, որ կտորներ անելը շատ էլ դժուար չէ...

Ես առանց դիտաւորութեան... առանց դիտաւորութեան... բայց երբ ես մտաբերում եմ այդ կնոջը, կատաղում եմ և ինձ ցանկալի է նոյն վայրէջանին ամեն բան փշրել...

— Այնպեղ առ այժմս դուք առանց այն էլ բաւական վնաս տուիք. իսկ հիմա պատմեցէք մանրամասնօրէն, թէ ինչպէս պատահեց այն ամենը:

Եւ Մերկը սկսեց պատմել:

Դա մի իրական տխուր պատմութիւն է, որից դեռ շատ քիչ բան գիտէր ուսուցիչը, որը միայն աժմս երեւեցաւ իր աւելի ագեղ ճիշդ պատկերով:

— Երբ ես աշխատանքից տուն էի վերադառնում ճաշելու, Պ. ուսուցիչ, ինձ ոչոք չէր հանգիպում. ճաշը պատրաստ չէր

լինում և ես ահամայ յաճախում էի հասարակական ճաշարան: Ճաշ էի խնդրում ատար կողքին և շատ անգամ էլ տասնութ հինգ: Երեկոներին կրկին ինձ ոչ ոք չէր դիմաւորում: Սենեակը չը մտքորոած, իսկ անկողինները միշտ պատրաստուած չէին լինում:

Իսկ զրոյցները կնոջն, երեխաների և այն օրիկայի մասին գլուխ էին տանում:

Իսկ այդ ամենը լսելուց յետոյ, երբ ես կատաղում և գնում էի կնոջն և թէ այն օրիկային պատառ պատառ անելու, այն ժամանակ սկսում էին ինձ հէնց նոյն զրոյցները համադրել և տանում էին գլխատուն, որ ես օդու աղդեցութեան տակ մոռանայի այդ անտանելի անբաղդութիւնը և ես խմում էի...

Խմում էի, ինչպէս մի գինու տիկ... այնպէս որ չէի կարող այլևս ոտի կանգնել:

Եւ նա նորից բռնեցրով ամուր խփեց սեղանին, իսկ նրա կատաղած աչքերը փայլում էին: — Այո, ես հարբում էի և դուք էլ, Պ. ուսուցիչ, կը հարբէիք, եթէ ձեր կինն էլ ձեզ հետ այդ տեսակ վարուէր, ինչպէս իմ կինն ինձ հետ էր վարում. նա ընկաւ սեղանի վերայ ու խորը ախ քաշեց:

Կենդանի դրոշմ մօտեցաւ նրան և կարեկցաբար ձեռքը ուսի վերայ դրեց:

— Ես ձեզ հիմա լաւ եմ հասկանում, Մերկ. ուրիշների պատմելով ես ձեզ աւելի վատթար էի կարծում. դուք ինձ հազորդեցիք այնպիսի բաներ, որոնք կարող էին թունաւորել նոյն իսկ ամենատիկերի ամուսնու կեանքը...

Ինձ հասկանալի է ձեր զայրոյթը. և սուել՝ թէ դա անտեղի է, ես ոչ մի ձեռով չեմ կարող: Մարդիկ՝ ինչ ուղղում են, թող ձեր մասին պատմեն, ես չեմ հաւատում, ես համոզուած եմ, որ դուք վատ մարդ չէք:

— Ոչ, ես յիմար մարդ չեմ, ես անամօթ չեմ, բայց բարի շունն էլ կը կատաղի, եթէ կատաղեցնեն:

— Լաւ, Մերկ, թէ դուք կամենում էք կարգին մարդ լինել, այն ժամանակ գոնէ ձեր երեխաների վերայ հոգ տարէք:

— Բայց նրանք իմ երեխաները չեն, պատասխանեց Մերկը, խմը չեն:

— Դուք ըրտեղից գիտէք, թէ նրանք իմն են. այդ խօսքերի մէջ արտափայլում էր այն մարդու վիշաք, որը խոր համոզուած էր ու հաւատացած, որ իւր կինը անարգար է և անհաւատարիմ:

Մերկ, եթէ դուք կասկածում էք, կանգնեցէք միասին

ձեր ուղղոյ հետ և նայեցէք հայելու մէջ. նրանք այնպէս նման են ձեզ՝ կարծես թէ կիսած խնձոր լինիք:

Եթէ զրանից յետոյ էլ պիտի կասկածէք, որ դուք նրանց հայրն էք, առե՛լ է, դուք գոռած էք:

— Իսկ ճիշդ որ դուք հաւատացած էք, թէ նրանք իմ երեխաներն են:

Եւ բանւորի աչքերից ցայտեցին արտասուքներ:

— Երգւում եմ Աստուծու անունով: Բայց դուք նրանց հետ վարուել էք ոչ հօր նման: Ահ որ նրանք զրկուած են մօրից, Մէրկ. աշխարհին երեսին նրանց համար ոչ ոք չէ մնացել բացի ձեզանից՝ հօրից. իսկ դուք գիտէք ինչ էք արել ձեր անբաղդութեան ժամանակ ընդորովին անմեղ մանուկներին: Դուք դուրս էք շարժել ձեր սրբիներին. ստիպել էք մնալ քաղցած, ընդորովին սոված: Ձեր փոքրիկ որդու թիկունքի վերայ ահա թէ ինչպիսի վերք է բացուած... և այդ դուք էք պատճառել, հարձած ժամանակ՝ այն էլ կրակխառնիչով:... Շատ կարելի է, ես հիմա էլ միակ մարդն եմ, որ կամենում եմ ձեզ բարեք, այն ինչ, եթէ ես համոզուած չըլնէի, որ նոյն բոպէին, երբ այդ արեք, դուք ոչինչ չէիք զգում, ես զըզուանքիցս կըթքէի ձեր երեսին... Այո՛, կըթքէի, եթէ յոյս չունենայի, որ դուք կարող էք հեռացնել այն շարեքը, որը պատճառ է դառել ձեր և որդոցդ անբաղդութեան:

Բանւորի կոշտացած, գործից սևացած կապտագոյն ձեռքերը ջղածգութեամբ կուշ էին գալիս. դարձեալ մի բոպէ, այլևս նա չըկարողացաւ դիմանալ. գլուխը կախ ձգեց սեղանի վերայ և գառնագին արտասուեց:

Կենիդուորքը չխանդարեց նրան լալ:

— Ձեր սիրտը դեռ ընդորովին չէ հովացել, ստաց նա վերջապէս, — երբ մարդս արտասուում է, կարծես թէ հողին ու սիրտը հովանում են, իսկ հիմա ձեզ եմ հարցնում, ինչ էք մտածում ձեր երեխաների ապագայի համար:

— Զըգիտեմ: Ես ամբողջ օրը աշխատում եմ և ինքս ժամանակ չունիմ երեխաների վերայ հոգ տանելու:

— Ես ևս այդ էի մտածում: Հեռեապէս՝ անհրաժեշտ է առ ժամանակ նրանց որևիցէ պանսիօն տալ:

— Բայց ո՞վ պէտք է նրանց ծախսը հոգայ: Ես օրուայ վարձ շատ քիչ եմ ստանում, նոյն իսկ ինձ չի բաւականացնում: Այո էլ ինկատի ունեցէք, որ ես մինչև կէս օր եմ աշխատում, քանի որ գործ չըկայ:

— Լաւ, միայն թէ ինչ որ ձեր ռոճիկից կաւելանայ, այն էլ ինձ բերէք. մինչև որ ձեր գործերը կը լաւանան, ես ձեզ

չօգնեմ: Երկու տարի է, որ ես փող եմ խնայում Ֆրանսերէն լեզուն դործնականապէս սովորելու համար և այդ նպատակով արձակուրդի ամիսներին ուղտում էի Պարիզում ապրել: Ես մի կարճ ժամանակով էլ ինձ կը զրկեմ այդ ճանապարհորդութիւնից, իսկ դուք դրա փոխարէն խօսք տուէք, որ այլևս չը խմէք և ձեր բոլոր աւելացած ուժիկը ինձ բերէք:

— Պարոն ուսուցիչ, պատասխանեց բանւորը, ես դրան արժանի չեմ, չընայելով որ ես խմելուց վաղ կը դամ, բայց ձեր փողերից չեմ կարող օգտուիլ:

— Դուք ձեզ համար մի ընդունէք Մերկ, այլ ձեր տղաների: Եւրաքանչիւր շաբաթ օր դուք պարտական էք ինձ բերել այն, որչափ ձեզ կը յաջողուի նրանց համար խնայել: Ես պակասը կը լրացնեմ, իսկ երբ գործդ կը շատանայ, աւել կը սկսէք աշխատել և ինձ կը վերադարձնէք իմ փողերը: Տեսնում էք, ես ձեր աղնիւ խօսքին հաւատում եմ:

— Պարոն ուսուցիչ, երբ գործերը շատանան, ես պատրաստ եմ գիշեր ու ցերեկ առանց հանգստանալու բանել, որ ձեր վերջի կոպէկը վերադարձնեմ՝ տոկոսն էլ, տոկոսի տոկոսն էլ: Ես ձեզ նոյն իսկ կարող եմ ստորագրութիւն էլ տալ, եթէ ցանկանում էք:

— Ինձ ոչ մի ստորագրութիւն պէտք չէ, ահա ինձ մօտ կախ է տուած այն պատկերը, որը ասաց, «Թող տուէք մանուկներին, որ քան ինձ մօտ»: ... Ես այդ անում եմ ձեր երեխաների սիրոյ համար, իսկ եթէ դուք խարդախ մարդ էք, այն ժամանակ ստորագրութիւնն էլ չի օգնիլ: Եթէ դուք, ինչպէս ես եմ մտածում՝ աղնիւ մաքր էք, ինձ համար ձեր լոկ խօսքն էլ քաւական է, ահա իմ ձեռք: Բայց առաջարկում եմ մի պարտաւորեցուցիչ պայման, դուք չը պէտք է խմէք:

— Ողջ կենանքում այլևս ոչ մի կաթիլ օղի չեմ քերանս առնելու չեմ. և Մերկի գէմքի վերայ փայլեց մի լին որ... որը մինչև անգամ աւելորդ ցաւ պատճառեց երիտասարդ ուսուցչի ձեռք սեղմելին:

— Շատ լաւ, իսկ հիմա չէիք կամենալ երեխաներիդ հետ տեսնուիլ:

— Իսկ ես չը գիտեմ, թէ նրանք ո՞ր տեղ են. և նա շփոթած աչքերը գետին ձգեց:

— Դուք հեռուն որոնելու չէք. նրանք իմ տան կտրի տակն են:

— Ա՛խ, պ. ուսուցիչ, ես ձեր այդ ամէն լաւութեան փոխարէն ինչո՞վ պէտք է փոխաբնեմ:

— Զեր որդիները համար լաւ հայր լինելով: Պնանք, եթէ ոչ շուտով նրանց քնելու ժամանակը կը գայ:

Նրանք բարձրանում էին սանդուխով: Մերկը ամօթից ոկոսեց հազալ և ինքն իրան մըմնջաց «Փառք Արարչին, որ այժմեանից այլ ևս նրանք փողոցներում չեն մնալու: Վերջին ատիճանի վերայ նա ձայն տուեց:

«Պետրոս, Յովսէփ» սպասելով պատասխանի: Բայց հօր հայրական զգացմունքներից դուրս թռած հարցը՝ ցանկալի պատասխանը չըստացաւ. ընդհակառակ բարձրացան երկիւղի և վախի ճշոցներ:

«Նա է, նա»:

Յետոյ լուսեց սեղանի շուռ գալու ձայնը, իսկ հետեւեալ ըսպէին տիւրեց խորին լռութիւն: Յուզմունքից ուսուցիչ ձեռները այնպէս էին դողդողում, որ միանգամից չկարողացաւ դուռը բաց անել, իսկ երբ այդ նրան մի կերպ յաջողուեց, նրանց գէմից մի այնպիսի պաղ քամի փչեց, որ մօմը հանգուռ Սենեակում բոլորովին մութ էր:

Շուտ, շուտ վառեցէք լուցիկն. լուցիկ, շուտ, շուտ: Միայն երբորդ լուցիկն վառուեց ինչպէս պէտքն էր՝ որով և կարելի եղաւ ճրագը վառել:

— Պետրոս, Յովսէփ:

Պատասխան չկայ:

Երեսաների շորերը աթոռի վերայ էին: Անկողիններում՝ որոնց մէջ նրանք ըստ երևութիւն պառկած պիտի լինէին, ոչինչ չկար: Կենդանութիւն վախից այս ու այն կողմն էր նայում. բայց և ոչ մի անկիւնում երեսաների հետքը չէր երևում: Միթէ նրանք յարզի մէջ են պահ մտել:

— Պետրոս, Յովսէփ, ո՛ւր էք դուք, այլայլուած կանչում էր Մերկը:

— Տէր ողորմեա, չը լինի թէ նրանք կտուր են փախել, բացահանչեց ուսուցիչը:

Յաճը լուսամուտը բաց էր թողած. սեղանն էլ դրուած էր լուսամուտի տակ:

Միանգամից Կենդանութիւն թռաւ սեղանի վերայ և գլուխը լուսամուտից ներս մտցրեց:

— Ահա նա՛, ահա—լուսեցին վախեցած երեսաների վերջին խօսքերը: Թռնաւորուած ու վախեցած երեսաները միայն մի շապիկով էին բարձրացել ձիւնով ծածկուած կտրի վերայ և թաթերի վերայ կուչ եկած մտել էին լայն ջրհոս խողովակների մէջ: Հաւաղ ձեան կտորները սաների տակ ողում էին և գետին ընկնում:

— Պետրոս, ձայն տուեց վախեցած Կենդանութիւնը և հազիւ դուրս եկաւ նեղ լուսամուտից դէպի կտուրը: Բայց փախտահանները նրան չէին լսում: Նրանք սողում էին աւելի հեռու շնայելով որ իւրաքանչիւր ըսպէ մայթի վերայ ընկնելու վտանգի մէջ էին գտնուում: Ուսուցիչը ջրհոս խողովակի մի անկիւնում նստեց. իսկ այդ միջոցին Պետրոսը արդէն կտրի վերջին էր հասել. այնտեղից չէր կարելի անցնել աղատուել, որովհետեւ հարեան տների կտուրները աւելի բարձր էին: Կենդանութիւնը աշխատում էր զգուշութեամբ երեսաններին մօտենալ:

— Վերադարձէք, վերադարձէք, չէ որ կընկնէք. բայց փախտահանները ականջ չէին դնում, այլ միայն վախից մըթնացած աչքերով տեսնում էին, որ իրանց հետեւողը մօտենում է: Յանկարծ Պետրոսը կամակորեց, ձեռները կոխեց հարեան տան պատի ճեղքերի մէջ ու պատից ճանկելով կատուի նման վեր բարձրացաւ ձեռքը ձգելով տան կտրի ձեան կտուրին, իսկ կտորը սկիւղ երեսայի ձեռքիցը, լաւ որ նա կտրի երկաթից արդէն ամուր բռնած էր ու այդպէս վերջապէս բարձրացաւ միւս բարձր կտրի վերայ:

— Իմ յետեւից Յովսէփ, նա քեզ կը բռնի, և պառկած դիւրով կռացաւ կտրի եզերքին ու ձեռքը երկարացրեց եզրօրը իւր մօտ քաշելու, բայց արդէն ուշ էր. ուսուցիչը կանգնած էր նրա քամակին և պինդ բռնած էր Յովսէփին, որը գեռնոր էր փորձում պատից բարձրանալ: Կենդանութիւնը քաշ տալ չէր վստահանում, որովհետեւ մեծ եղբայրն էլ փոքրի ձեռքն էր բռնած ու բաց չէր թողնում. մի թեթեւ՝ անզգոյշ շարժում և ահա երեքն էլ կը դլրուէին դէպի մութ փողոց, ուր լապտերները աղօտ լուսաւորում էին:

— Պետրոս, ո՛ւր մնաց քո խոստումը: Խօղ եղբորդ ձեռք, եթէ ոչ նա վայր կընկնի:

Մեծը փոքրի ձեռք թողեց ու աչքը շանաւուն պէս նստեաւ միայն ուսուցչին:

— Պետրոս, վերադարձէք, վերադարձէք իսկոյն, եթէ չես կամենում ուխտադրուի լինիլ, աղաչում էր ուսուցիչը: Սպասիր՝ եո քեզ կօղնեմ:

— Նա, նա, յանկարծ նորից բղաւեց Պետրոսը և փոխանակ վերադառնալու, ձեռքերի վերայ սողաց հարեան կտրի վերայ:

Կենդանութիւնը յետ նայեց, տեսաւ որ երեսանների հայրն էլ էր իրան հետեւել ջրհոս խողովակի վերայով:

— Յետ դնա՛ Մերկ, ասաց նա: Յետ դնա՛, ձեզ հրամայում եմ, յետ դնա՛:

Երեխաները ձեռնից վախենում են և կարող են վայր ընկնել: Առաջ մի դնա՛: Երեխաներին մի՛ ձեռք տալ. քեզ ասում եմ՝ յետ դնա՛: Բայց Մերկը չէր հնազանդուում. երկկողմ երեխաների համար նրան առաջ էք քշում, բայց ուսուցիչը կրկին բղաւեց: Յետ դնա՛, եթէ ոչ անբաղդութիւն կը լինի:

Միայն այդ ժամանակ բաները ծնկաչոր ներս մտաւ նեղ լուսամուտից: Պետրոսը, որ միշտ առաջ էր դնում՝ յետ նա յետիւ, տեսաւ որ հայրը չկայ, վերադառնալով՝ յետ կանգնեց իր յուսահատ փախուստից:

— Վերադարձիր Պետրոս, քեզ ոչ ոք ձեռք չի տալ. բաւա- կան է, վերադարձիր:

— Ես նրանից սաստիկ վախենում եմ:

— Մերկ, դնացէք իմ սենեակը և սպասէք ինձ. երեխա- ները սարսափելի կերպով վախենում են ձեզնից:

Խեղճ, անբաղդ հայրը լուսամուտի մօտ այնպէս մի խոր ակն քաշեց, որ կարծես բղաւում էր:

Պետրոս, կանչեց նա և ձեռք որդուն երկօրացրեց:

— Այդ ամենը ի դուր են, դնացէք:

Մի րոպէ էլի կռուեց մօրդը ինքն իրան հետ, միանգամ էլ նայեց երեխաներին իսկ յետոյ հնազանդուելով երեքամսարդ ուսուցչի հրամանին տքալով ու ակն քաշելով վայր իջաւ սե- նեակ:

— Գնանք, ես քեզ կը տանեմ, ասաց Կենդագործը Յով- սէփին, եթէ ոչ դու կը սառես:

Նա փորձեց նրան զգուշութեամբ առաջ տանել, բայց երեխան ամուր բռնել էր խողովակից և չէր ցանկանում տե- ղից շարժուիլ:

— Թող խողովակը, Յովսէփ, և մի կանչի, եթէ ոչ Պե- տրոս վախից վայր կընկնի գետին և կը մեռնի, շշնաց ուսու- ցիչը նրա ականջին. իսկ նա ճիշտ որ դնացէլ է. հարցրեց երեխան:

— Այո, չէ՞ որ դու լսեցիր: Ես ես նրան հրամայեցի դնալ:

Այդպէս զգոյշ առաջ սողա. ես քեզ պինդ եմ բռնել: Նրանք տանք իրարից պատուհանից ներս սողացին. Կենդագ- օրօքը աչք ձգելով Պետրոսի վերայ ձայն տուեց, արե՛, արե՛. քո հայրը սենեակում չէ:

Յովսէփը նոյնպէս գլուխը ներս մացրեց լուսամուտից հա- մոզուելու համար, թէ ճիշտ է և տեսնելով հօր բացակայու-

թիւնը այլ ևս չընդդիմացաւ, երբ Կենդագործը զգուշութեամբ վայր էր իջնում նրան դէպի սենեակը:

— Դու ինքդ փակիր դուռը և կանգնիր վտարանի մօտ, հրամայեց Կենդագործը, և երեխան հրամանը իսկոյն կատարեց:

Պետրոսը հարձան կտրեց ու շարժութիւնը լարած լսում էր, թէ արդեօք ինչ է լինելու. — եղբայրը չէր բղաւում. ասել է, ճիշտ որ հայրը այնտեղ չէ:

Նա կարծես թեթևացած հառաչեց և զարմացմամբ նա- յում էր ուսուցչի վրայ:

— Դէ՛ շուտ արա, եկ, Պետրո՛ս, ասաց նա. հայրդ ցած գնաց, իսկ Յովսէփը սանդուխի դուռը փակել է: Բայց երե- խան հարցախան հայեացքով նայում էր ուսուցչին, կախ տա- լով իրան կտրից: Հալւող ձիւնը ամենաթեթև շարժումից թըռ- չում էր նրա տակից, իսկ ձեռները փետացել էին, երկար ժամանակ նա չէր կարող բռնել:

— Եթէ դու իսկոյն վերադառնաս, ես քեզ խօսք եմ տալիս, ոչ հայրդ և ոչ էլ ես քեզ չենք պատժիլ, ասաց Կենդագործը գուշակելով երեխայի կասկածը:

Միայն այդ խօսքերից յետոյ Պետրոսը նոր սկսեց իր հա- կառակ ճանապարհորդութիւնը: Կատուի նման նա ցատկեց կտրից դէպի խողովակը, որտեղ նրան սպասում էր ուսուցիչը:

Նեղլիկ պատուհանի առաջ երեխան կրկին կանգ առաւ.

— Ճիշտ որ նա գնացել է:

— Ինքդ նայիր:

Պետրոսը ներս նայեց: Եղբայրը նրան նշան արեց, որ նա՛ որից իրանք անչափ վախենում էին, սենեակում չէ: Պետրոսը ակն քաշեց:

— Ես ինքս միայնակ կարող եմ, ասաց նա մերժելով ու- սուցչի օգնութիւնը և լուսամուտից վայր թռաւ սեղանի վրայ: Յանկարծ տեսնելով իրան յատակի վրայ, առաջի գործը եղաւ վազել դէպի դուռը համոզուելու համար, թէ լաւ փակուած է: Իսկ այդ ժամանակ ուսուցիչը վայր էր իջնում դէպի սենեակ: Նա սաստիկ գունատուած էր. փակելով լուսամուտը ծանր շունչ քաշեց: Նա շատ բարկացած էր և զայրացած. և մօտե- նալով Պետրոսին, կտրուկ կերպով հարցրեց. «Ինչի՛ դու այդ- պիսի բան արիր»:

— Ահա թէ ինչու. — Կնդացած ու սիրտ առած պատաս- խանեց երեխան և եղբօր շապիկը պատառելով ցոյց տուեց կրկին նրա թիկունքի վերայի վէրքը:

— Կը նշանակէ դու հօրեղդ վախենա՞ւ ես:

— Այո՛.

— Հագէք, ցուրտ է:

Երեխաները հրամանը կատարեցին:

— Իսկ եթէ դուք կտրեց վայր ընկնէիք:

Երեխաները չը պատասխանեցին, այլ սառածիկ դողդողալով մօտեցան տաք վառարանին:

— Դուք զիտէք, որ ես սուտ չեմ ասել. կամ կարելի է, դուք ինձ էլ չէք հաւատում: Դի քիչ անցնելուց յետոյ հարցրեց ուսուցիչը:

Ո՛չ, հաւատում ենք:

— Զեր հօրը ես էի կանչել ինձ մօտ: Նա այլ ևս ձեզ ծեծելու չէ: Նա ցանկացաւ ձեզ տեսնել: Նա ցածրում ինձ կրօպառի. ես հիմա գնում եմ նրա մօտ:

Նա շատ անբաղդ է. նա ոչ ոք չունի, որ իր վրայ հոգ տանի. ես նրան կասեմ, որ դուք էլ նրանք չէք:

— Յովսէփ, դու ինչո՞ւ ես լալիս:

Երեխան չը պատասխանեց:

— Միթէ դու հօրդ չե՞ս խղճում:

— Խղճում եմ:

— Եթէ այդպէս է՝ ես նրան կասեմ, որ դուք խոտաւնում էք ուղղուել... Նա ձեզ իր հետ տանելու չէ, որովհետեւ նա ինքը չի կարող ձեր վրայ հոգ տանել:

Արդեօք չէիք ցանկանում զոնէ մի բոպէսով իմ հետ նրա մօտ գնալ:

— Ո՛չ, յայտնեց Պետրոսը և բոլորովին կծկուելով դէպի պատնէք սեղմուում՝ ճիշտ նրա մէջ որոնելով փրկութիւն: Պատուիր քո հօրդ և մօրդ... Սկսեց ուսուցիչը, բայց հէնց նոյն վայրկեանին դադար, որ երեխաներին այդ պատուէրը չի ներդրած:

Մի քիչ լռելուց յետոյ: «Ամենից առաջ լաւ տաքացէք և շնորհակալ եղէք Արարչից, որ ձեզ ոչ մի փորձանք չը պատահեց կտրի վրայ. իսկ ես կըզնամ ձեր հօր մօտ և կրկին կը խօսեմ նրա հետ, եթէ նա ինձ խօսք կը տայ, որ ձեզ չի դիպչիլ՝ արդեօք դրանից յետոյ նրան ձեռք կը տամ:

— Այո՛, պատասխանեց Յովսէփը. հէնց նրա յեռանկէն Պետրոսը գլխով համոծայնութեան նշան արաւ:

— Իսկ դուք նորից կտուր չէ՞ք փախչիլ, քանի որ ես ցածն եմ:

— Ո՛չ:

— Եթէ այդպէս է, ես շուտով ձեր յեռանկէն կը գամ:

— Կենդանորէն դնաց և դուռն էլ դրոյն փակեց...

Նա Մերկին դուռը շտապանց կոտորածով դուրսէն մէջ:

— Փառք Աստուծոյ, երեխաները անվնաս վերադարձան տեղեւոյ:

— Դուք ինքներդ տեսնում էք, թէ երեխաները ձեզնից մի աստիճան վախեցած են և վախենում են, իսկ դրա պատճառը ձեզ լաւ յայտնի է: Դուք երեխաների սէրը կորցրել էք: Ուժով երեխաների վատահալութիւնը չի կարելի ձեզ վերադարձնել: Ես հիմա նրանց կը բերեմ ձեզ մօտ և եթէ կամենում էք ինձ լսել՝ ամենաթեթեւ յանգիմանութիւն անդամ անելու չէք: Նրանք առանց այն էլ շատ ու շատ վախենում են:

Հասկացա՞ք:

Մերկը որպէս պատասխան գլխի շարժում արաւ. նա դեռ կուշ էր գալիս գետնին նայելով:

Հաղիւ երբեմն նրա աշխատուոր, տհազին ձեռները ցընցուելով շարժում էին, որպէս թէ կամենալով մի բան սեղմել:

Նրա թշուառ զրութիւնը ազդեց ուսուցչին. պատեց խորին կարեկցութիւն, դա մի մարդ էր, որը կորցրել էր կնիքը, երեխաներին, ուրիշի և իր յատուկ մեղքի պատճառով:

— Մէրկ, ամբապնդուէ՞ք, եղէ՛ք աղամարդ և բարձրացրէ՞ք գլուխդ: Եթէ դուք, յիշաւի, վճռել էք քաւել ձեր մեղքը, դեռ դրա համար երկար ժամանակ կայ: Հասկանո՞ւմ էք, երեխաների հետ խիստ մի լինիք, ես կը գնամ նրանց բերելու:

— Իսկ նա մեզ սչինչ չի՞ տնի, ձեռք չի՞ տալ, Պետրոսը վազեց ուսուցչի առաջը կտրելով, երբ նա ներս մտաւ:

— Ամենահին: Զեր հայրը շատ անբաղդ է: Նա շատ և շատ վշտեր է տեսել: Եթէ դուք նրա հետ լաւ լինիք՝ նա էլ նոյն տեսակ բարութեամբ կը նայէ:

Կենդանորէն վերադարձաւ իր սենեակը բռնած երեխաների ձեռներով. նրանք էլ նոյնպէս ուսուցչին էին բռնել, կտրածն թէ իրանց բոլոր պաշտպանութիւնը դրա մէջ էին գրանում և միևնոյն ժամանակ աշխատում էին ուսուցչի շորերի տակ պահ մտնել: Մերկը երկարացրեց նրանց իւր ձեռքը, բայց երեխաները չը շարժուեցին և դեռ դողում էին: Հայրը այլ ևս չկարողացաւ գիմանալ այդպիսի մի հոգեկան մանշող տանջանքի և երեխայի նման սկսեց լալ:

— Մի բոպէ երեխաները քարացած կանգնած էին: Այդ զրութեան մէջ նրանք երբէք իրանց հօրը տեսած չէին:

— Նա ձեզ համար է լալիս, փոփոաց նրանց տկանջին ուսուցիչը:

— Հայրիկ. աղաղակեց Յովսէփը և արտասուքը աչքերին ընկաւ բանւոր հօր ծնկների մէջ. հայրը ծածկեց աղայի գէմքը իր մտղերով և լալիս էր: Այդ միջոցին Պետրոսն էլ բռնեց հօր ձեռքը...

—Հայրե՛հ, կրկնեց եղբօր յեանից: Եւ խոշոր արցունքի
կաթիլները սկսան թափուել նրա գունատ, տանջուած դէմքի
վրայից:

Կենիդ սղօփը զբաց, որ իր ներկայութիւնը այդտեղ ա-
ւելորդ է, մտաւ սիրտ սենեակը: Մի քանի ժամանակից յետոյ
վերադարձաւ և տեսաւ Մերկին նոյն տեղը, բայց նա այլ ևս
չէր լալիս, այլ փաղաքշում ու շոյում էր երեխաների ձեռ-
ները...

—Իսկ այժմ ձեզ ժամանակ է քնելու, առաց Կենիդ սղօր-
ֆը: Հայրիկը ամեն օր կը գոյ ձեզ տեսութեան և շատ կուրա-
խանայ, եթէ ես նրան հաղորդեմ, որ դուք խելօք, խելացի
էք: Ուրեմն ձեռք տուէք հայրիկին և գնանք:

Մերկը կանգնեց:

—Եղէք բարի ու խելօք երեխաներ և շնորհակալութիւն
յայտնէք պ. ուսուցչին, ինքն էլ պինդ սեղմեց—Կենիդ սղօրֆի
ձեռքը:—Ես կարո՞ղ եմ կրկին գալ:


—Եթէ կցանկաք, իմ բարեկամ:

—Պ. ուսուցիչ, ես... ես առաջուայ նման պիտի աշ-
խատեմ:

—Ես երբէք չեմ մոռանալ այն ամենը, ինչ որ դուք
մեզ համար արիք, շնորհակալ եմ ձեզանից:

Եւ գնաց:

Կենիդ սղօրֆը երեխաներին տարաւ իրանց սենեակը և
նրանց հետ աղօթեց:



985

0004633

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004633

